

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Հրապարակել Թե Չհրապարակել

Այս օրերում Հայաստանի ֆա-  
ղափական օրակարգի ամենէն հրա-  
տապ հարցը կը հանդիսանայ 2017-  
ին կայանալիք խորհրդարանական  
ընտրութիւնները: Այս առթիւ իշ-  
խանութիւնները պատրաստած են  
ընտրական նոր օրինագիծի մը,  
որոն շուրջ հրապարակային ճնշար-  
կումներ կը կատարուին:

Երեսնամեայ ժամանակ է Վենե-  
տիկի Յանձնաժողով անունով ծա-  
նօթ մասնագէտներու խումբը, որ  
ուսումնասիրել է ետ Եւրոպական  
երկիրներու մէջ առաջարկուող  
տարբեր օրինագիծերը կը կատա-  
րէ իր թելադրութիւններ, որպէսզի  
այդ օրէնքները համապատասխա-  
նեն Եւրոպական չափանիշներուն:

Խորհրդարանական խմբակ-  
ցութիւններու հետ իրենց ունեցած  
հանդիպումներու ընթացքին, մաս-  
նագիտական խումբի անդամները  
լսեցին բազմաթիւ դժգոհութիւն-  
ներ՝ առաջարկուող Օրինագիծի  
տարբեր դրոյթներու կապակցու-  
թեամբ: Ընդդիմադրութեան գլխա-  
ւոր պահանջը կը հանդիսանայ  
ընտրութիւններուն մասնակցողնե-  
րու ցուցակներու հրապարակու-  
մը, որպէսզի ֆաղափական ուժերը  
ծանօթանան, թէ որոնք մասնակ-  
ցած են ֆուէրկուրսեան: Հայաս-  
տանի ընդդիմադրութիւնն ու հա-  
սարակական կազմակերպութիւ-  
նները կասկած կը յայտնեն, որ իշ-  
խանութիւնները արտագաղթող-  
ներու եւ կամ երկիրէն քացակա-  
յողներու փոխարէն ֆուէրկուրսի  
կատարելով, 500-700 հազար ձայն  
իրենց ի նպաստ նախօրոք կ'ապա-  
հովեն: Անոնք կը պնդեն որ, ընտ-  
րողներու ցուցակներու հրապար-  
ակումը միայն, կրնայ առաջիկ  
առնել այս տեսակի կեղծիքներուն:

Իշխանութիւնները ցարդ կը  
մերժեն ընտրողներու ցուցակնե-  
րը հրապարակելու առաջարկը:  
Անոնք կը պնդեն որ, այդ ցուցակ-  
ներու հրապարակումը խախտում  
է անհատներու գաղտնի մնալու  
իրաւունքին:

Ընտրական Օրինագիծի այս եւ  
այլ դրոյթներու շուրջ ծագած տա-  
րակարծութիւնները, անվստահու-  
թիւն կը յառաջացնեն ժողովուրդի  
մօտ՝ յառաջիկայ ընտրութիւննե-  
րուն արդար ըլլալուն շուրջ:

Իշխանութիւններու պատաս-  
խանատուութիւնն է փարատել քո-  
լոր կասկածները ու վերականգ-  
նել հասարակութեան վստահու-  
թիւնը: Այդ ուղղութեամբ, անոնք  
պարտաւոր են ընդառաջելու ընդ-  
դիմադրութեան որոշ պահանջնե-  
րուն՝ միջին լուծումներ գտնելու  
նախապարհով:

Ժամանակը եկած է գիտակ-  
ցելու, որ երկրի գարգացման միակ  
ուղին կ'անցնի ազատ ու արդար  
ընտրութիւններու նախապարհով:  
«ՄԱՍԻՍ»

### Վենետիկի Յանձնաժողովի Մասնագէտները Հանդիպումներ Ունեցած են Հայաստանի Ազգային Ժողովի Խմբակցութիւններուն Հետ

Վենետիկի Յանձնաժողովի  
մասնագէտները Հայաստանի Ազ-  
գային Ժողովէն ներս հանդիպում-  
ներ ունեցած են խորհրդարանա-  
կան խմբակցութիւններուն հետ՝  
քննարկելու համար ընտրական նոր  
օրէնագրի դրոյթները:

«Ժառանգութիւն» կուսակցու-  
թեան փոխնախագահ Արմէն Մար-  
տիրոսեան փոխանցեց, որ Վենետի-  
կի Յանձնաժողովի ներկայացու-  
ցիչները խմբակցութեան հետ  
հանդիպման ժամանակ չեն պնդած,  
թէ քուէարկութեան մասնակցած  
ընտրողներու ցուցակներու հրա-  
պարակումը գաղտնիութեան  
սկզբունքի խախտում է:

«Ակնյայտ է որ, Վենետիկի  
Յանձնաժողովը իր որոշումները ըն-  
դունում է՝ հիմք ունենալով ԵԱՀԿ/  
ԺՀՄԻԳ-ի եզրակացութիւնները,  
որովհետեւ աշխարհում թիւ մէկ  
դիտորդական առաքելութիւնը  
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն է, եւ նա է պրո-  
ֆեսիոնալ գնահատական տալիս, եւ  
նորից եմ կրկնում, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-  
ի վերջին եզրակացութեան մէջ  
չատ կարեւոր է, որ միանշանակ

նշուեց քուէարկած քաղաքացիներ  
ցուցակները հրապարակելու խնդի-  
րը», - ըսաւ Մարտիրոսեան:

ԲՀԿ կուսակցութեան խորհր-  
դարանական խմբակցութեան ղե-  
կավար Նաիրա Զոհրաբեան «Ազա-  
տութիւն» ռատիոկայանին փոխան-  
ցեց, որ հանդիպման ժամանակ  
մասնագէտները քուէարկութեան  
մասնակցած ընտրողներու ցուցակ-  
ներու հրապարակման առնչուող  
հարցին յստակ պատասխան չեն  
տուած:

Զոհրաբեան յայտնեց, թէ իր  
տպաւորութեամբ՝ Վենետիկի Յանձ-  
նաժողովի մասնագէտները չեն  
պնդեր ցուցակներ չհրապարակե-  
լու հարցով:

ՀԱԿ խորհրդարանական  
խմբակցութեան ղեկավար Լեւոն Զու-  
րաբեան իր կարգին յայտնեց, որ  
հանդիպումը բաւական երկար տե-  
ւած է եւ մասնագէտները ուշադրու-  
թեամբ լսած են Ընտրական Օրէնագր-  
քի վերաբերեալ ՀԱԿ-ի պատգամա-  
ւորներու առաջարկները:

Շաբ.ը էջ 6

### Դեսպան Ռիչըրտ Միլլզի Հանդիպումները Ամերիկահայ Համայնքին Հետ



ՄԴԿԿ ներկայացուցիչները Դեսպան Ռիչըրտ Միլլզի հետ

Հայաստանի մօտ Միացեալ Նա-  
հանգներու դեսպան Ռիչըրտ Միլլզ  
անցեալ շաբթուայ ընթացքին հան-  
դիպումներու շարք մը ունեցաւ  
Ուաշինկթընի, Նիւ Եորքի, Պոսթը-  
նի, Ֆրեզնոյի եւ Լոս Անջելէսի մէջ  
գործող Հայ համայնքի քաղա-  
քական, կրօնական, բարեսիրական  
եւ այլ կազմակերպութիւններու ղե-  
կավարութեան հետ:

Մարտ 10-ին, Դեսպան Ռիչըրտ  
Միլլզ հանդիպում ունեցաւ Սոցիալ  
Դեմոկրատ Հնչակեան Կուսակցու-  
թեան եւ Հայ Ամերիկեան Խորհուր-  
դի ներկայացուցիչներուն հետ:

ՄԴԿԿ Արեւմտեան Ամերիկա-  
յի Վարիչ Մարմինի ատենապետ

Գրիգոր Խոտանեանի գլխաւորած  
պատուիրակութեան անդամները  
դեսպանին ներկայացուցին Կու-  
սակցութեան տեսակէտներն ու մտա-  
հոգութիւնները՝ Հայաստանի ներ-  
քին քաղաքական, տնտեսական եւ  
ընկերային հարցերու մասին ու պա-  
հանջեցին, որ Միացեալ Նահանգնե-  
րու վարչակազմը աւելի խստապա-  
հանջ գտնուի ու ազդու կերպով  
օգտագործէ իր ունեցած լծակները,  
ճնշում գործադրելու համար Հայաս-  
տանի իշխանութիւններուն վրայ՝  
երկրէն ներս իսկական բարեփո-  
խումներ յառաջացնելու համար:

Շաբ.ը էջ 4

### Սուրիահայերը Լաւատես են Երկրի Ապագայով

Մարտ 14-ին, նախագահ Վլա-  
տիմիր Փութին անակնկալօրէն  
յայտարարեց, որ ռուսական զօրքե-  
րը՝ աւարտած ըլլալով իրենց  
տրուած պարտականութիւնները,  
պիտի սկսին հեռանալ Սուրիայէն:

Ռուսաստանի այս որոշումը  
Սուրիոյ հայկական համայնքէն ներս  
յառաջացուցած է տարբեր կար-  
ծիքներ:

«Գանձասար» թերթի խմբա-  
գիր Զարմիկ Պողիկեան «Ազատու-  
թիւն» ռատիոկայանին ըսած է, որ  
հայկական համայնքը կը կիսէ  
երկրի պաշտօնական տեսակէտը այն  
մասին, թէ ռուսական կողմը օգնեց  
բանակցութիւններու յաջողութեան  
հասնելու հարցով եւ հարկ եղած  
պարագային դարձեալ կ'օգնէ:

«Որպէս հայ համայնք՝ մենք  
միշտ ջատագով եղած ենք սուր-  
իական հարցի խաղաղ հանգուցա-  
լուծման: Մեր համայնքը դրակա-  
նօրէն պիտի արտայայտուի սուր-  
իական բանակցութիւններու առն-  
չութեամբ եւ միշտ ջատագով եղած  
ենք տագնապի լուծման: Եւ կ'ու-  
զենք յաջողութիւն մաղթել, որ  
վերջապէս խաղաղութիւն հաստա-  
տ-

Շաբ.ը էջ 4

### Յեղասպանութեան Մասին Թուրքիոյ Մէջ Պատրաստուած Առաջին Ֆիլմը Կը Ցուցադրուի Ապրիլին

Ապրիլ 1-ին, Թուրքիոյ մէջ  
կը սկսի ցուցադրուիլ Հայոց ցե-  
ղասպանութեան մասին պատմող  
«Կորած Թուռներ» գեղարուես-  
տական ֆիլմը: Երիտասարդ բե-  
մադրիչներ՝ Արէն Փերդեհիի եւ  
էլա Ալթամաչի պատրաստած ֆիլ-  
մը կը պատմէ հայ երեխաներու՝  
քոյր ու եղբայր Մարիամի եւ  
Պետոյի մասին, որոնք 1915 թուա-  
կանին կորսնցուցած են իրենց  
ընտանիքը:

«Կորած Թուռներ»-ը 1915-  
ի իրադարձութիւններու մասին  
Թուրքիոյ մէջ նկարահանուած  
առաջին երկար ֆիլմն է: Հեղի-  
նակներն ու դերասանները Պոլսոյ  
հայկական Սահակեան-Նուրեան  
վարժարանէն ներս հանդիպումի  
մը ընթացքին պատմեցին ֆիլմի  
ստեղծման մասին, յայտնելով թէ  
իրենք քաղաքական նպատակներ  
չեն հետապնդած:

Ֆիլմին մէջ գլխաւորաբար  
հայագի դերասաններ են:

Ֆիլմը առաջին անգամ ցու-  
ցադրուած է անցեալ տարուայ  
Նոյեմբերին՝ Միացեալ Նահանգնե-  
րու «Արփա» միջազգային փա-  
ռաստանի ընթացքին՝ արժանանա-  
լով երեք մրցանակի:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայկական Զինուժը Լուծել է Խնդրի Առաջին Մասը

ՅԱԿՈՒԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Սերժ Սարգսեանի Մոսկուա կատարած այցը «ստուերեց» Մարտի 9-ին Հայաստանի արտաքին գործերի եւ պաշտպանութեան նախարարների այցը Պրիւսէլ, որտեղ տեղի ունեցաւ Հայաստան +28 ձեւաչափի հանդիպումը, այսինքն Հայաստան-ՆԱՏՕ հանդիպումը:

Այդ հանդիպումն իհարկէ կրում է պարբերական բնոյթ, այդուհանդերձ ներկայումս այն տեղի է ունենում առանձնապատուկ տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական իրավիճակում, ինչն այն առաւել կարեւոր է դարձնում Հայաստանի համար:

Էդուարդ Նալբանդեանի եւ Մէլքիսէ Ծհանեանի բրիւսէլեան այցի պաշտօնական հաղորդագրութիւններից դուրս մանրամասներ չկան: Ըստ պաշտօնական հաղորդագրութեան, Հայաստանն ու ՆԱՏՕ-ն քննարկել են երկկողմ գործակցութեան, անհատական գործողութիւնների ծրագրի ընթացքի վերաբերեալ հարցեր եւ գոհունակութիւն յայտնել դրա կապակցութեամբ:

«Մրազրային» այդ գործակցութիւնից դուրս, Հայաստանն ու ՆԱՏՕ-ն ունեն նաեւ քննարկելու ռազմա-քաղաքական կարեւոր խնդիրներ, կապուած Կովկասի հետ, յատկապէս այժմ, երբ տարածաշրջանը գտնուում է անվտանգութեան համակարգի վերանայման, որոշակի անցումային փուլում: Ռուսաստանի եւ Թուրքիայի յարաբերութեան լարումը, միաժամանակ իրանի հանդէպ պատժամիջոցների չեղարկումը ստեղծել են լիովին նոր վիճակ: Դրան գումարում է այն, որ ՆԱՏՕ-ն փաստացի ինստիտուցիոնալ ներկայութիւն է հաստատել Կովկասում՝ 2015 թուականին բացուեց եւ առաջիկայ ամիսներին կը սկսի գործել վրաստանում ՆԱՏՕ ռեսուրսական կեդրոնը:

Տարածաշրջանում փոխուում է ուժերի դասաւորութիւնը, սուբիեկտների յարաբերակցութիւնը, եւ ակնյայտ է, որ այդ զարգացումը պէտք է բերի անվտանգութեան նոր համակարգի եւ նոր մեխանիզմի ձեւաւորման: Մեծ հաշուով, այդ խնդիրը կարեւոր դարձաւ Արցախի պատերազմով, դրա արդիւնքով:

Պատերազմի արդիւնքը տարածաշրջանում բերեց ուժերի լայն հաւասարակշռութեան, սակայն իրավիճակը Կովկասում չկայունացաւ կամ սկսեց ապակայունանալ, որովհետեւ տարածաշրջանի անվտանգութեան լայն համակարգը համարժէք չէր այդ հաւասարակշռութեանը, անհաւասարակշիռ համակարգ էր:

Հետեւաբար, տարածաշրջանը տարիների ընթացքում կանգնեց դիլեմայի առաջ՝ կամ պէտք է վերականգնուի անվտանգութեան գործող համակարգին համարժէք ստատուս-քուօ, այսինքն պէտք է վերանայուի Արցախի պատերազմի արդիւնքը՝ ինչի վերաբերեալ

վերջին տարիներին հենց աշխոյժ գործակցութիւն եւ ռազմավարական գործընկերութիւն սկսեցին այդ հարցի առանցքային երեք շահառուները՝ Ատրպէյճանը, Ռուսաստանն ու Թուրքիան, կամ պէտք է վերանայուի անվտանգութեան նախկին եւ այլեւս ակնյայտօրէն չգործող համակարգը, որը իարսիսուած էր Ռուսաստանի եւ Թուրքիայի վրայ:

Վերանայել Արցախի պատերազմի արդիւնքը՝ խոշոր հաշուով նշանակում է վերանայել տարածաշրջանային հաւասարակշռութիւնը, ինչը Կովկասը կը գրկի «ինքնակարգաւորող» տարածաշրջանի կարգավիճակից եւ կը շարունակի մշտապէս մեծ ուշադրութիւն եւ հենդիւս խլել անվտանգութեան միջազգային համակարգից:

Մինչդեռ միջազգային անվտանգութեան տեսանկիւնից խնդիրը թերեւս այն է, որ Կովկասը դառնայ այդ անվտանգութեան մեխանիզմի մաս եւ անընդհատ «խնամք» պահանջելու փոխարէն, կարողանայ ինքնակարգաւորուել եւ դրանով մասնակցել միջազգային անվտանգութեան մեխանիզմի աշխատանքին, լինելով այդ մեխանիզմի օղակ, ոչ թէ բեռ:

Դրա համար հարկ է վերանայել տարածաշրջանային անվտանգութեան հնացած համակարգը, այն համարժէք դարձնել այն հաւասարակշռութեանը, որ տարածաշրջանում ապահովել է հայկական զինուժը Արցախի պատերազմի արդիւնքով եւ կարողացել է պահել անցնող երկու տասնամեակում, յատկապէս վերջին տարիներին ռուս-թուրքական ուժերի ճնշման պարագայում:

Բայց, երկարաժամկէտ լուծում ապահովելու առումով հայկական զինուժն ունի մի շարք օբիեկտիւ ու սուբիեկտիւ խնդիրներ, որոնք հնարաւոր չէ չաղթահարել առանց միջազգային աջակցութեան: Որքան էլ ռուս-թուրքական լարուածութիւնն ու խզումը թուլացրել է ճնշումը, այդուհանդերձ կայ խորքային, յետադիմական համակարգային, սակաքաղաքակրթական ճնշում՝ Արցախի պատերազմի արդիւնքի վրայ, որը Կովկասը մօտեցրել է երկարատեւ խաղաղութեան շեմին: Այդ շեմն անցնելու համար անհրաժեշտ է չաղթահարել այդ ճնշումը: Վերջին հաշուով, Արցախի պատերազմը հայ-ատրպէյճանական չէր, այլ քաղաքակրթական, այդ շարժումն ու պատերազմը թէ ազգային ինքնորոշման, թէ քաղաքակրթական արդիականացման համար էր:

Հայաստան-ՆԱՏՕ գործակցութիւնը առանցքային նշանակութիւն ունի առաւելապէս այդ տեսանկիւնից, քանի որ ՆԱՏՕ-ն անվտանգութեան ոչ միայն ռազմա-տեխնիկական, այլ առաջին հերթին քաղաքակրթական առաջատար համակարգ է. ռազմատեխնիկական անվիճելի առաջատարութիւնն ընդամէնը դրա արդիւնքն է:

«ԼՐԱԳԻՐ»

Ներքաղաքական Սահմանի Գիծը

ՅՈՒՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Արտաքին գործերի նախկին նախարար՝ Վարդան Օսկանեանը, որը յայտարարել է կուսակցութիւն ստեղծելու մասին, Մարտի 14-ին խորհրդարանում լրագրողների հարցերին պատասխանելիս յայտարարել է, որ Մարտի 1-ի պատասխանատուն այդ օրուայ իշխանութիւնն է:

Որեւէ կասկած չէր կարող լինել իհարկէ, որ Մարտի 1-ի թեման լինելու է հարցերի շրջանակում Հիմնականներից մէկը, որ քաղաքական գործունէութեան ընթացքում ամէնից շատ կը տրուի Վարդան Օսկանեանին, որն այդ օրը ըստ էութեան ստանձնել էր իշխանութեան խօսնակի դերակատարումը: Օսկանեանը այսօր յայտարարել է, որ ի տարբերութիւն շատ գործիչների, ինքը համարձակութիւն է ունեցել տեսախցիկի առաջ կանգնել եւ իշխանութիւններին ու ընդդիմութեանը կոչանել խուսափել ընդհարումից:

Եւ այս տեսակէտից, իսկապէս, Վարդան Օսկանեանի նման համարձակութիւնը պէտք է ողջունել, եթէ դա համարձակութիւն էր եւ ոչ թէ ընդամէնը կատարուած հրահանգ կամ ցուցում, որը իհարկէ կարող էր ունենալ իր որոշակի հաշուարկը: Խնդիրն այն է, որ Մարտի 1-ի իրադարձութիւնները առաւօտեան Ազատութեան հրապարակում ծեծուշարդից յետոյ զարգանում էին արդէն Միասնիկեանի արձանի մօտ՝ մի քանի արտասահմանեան դեսպանատների հարեւանութեամբ եւ, ըստ ամենայնի, եւ՛ ընդդիմութիւնը, եւ՛ իշխանութիւնները շեշտը դնում էին արտաքին «քարտէլանշի» կամ «աջակցութեան» վրայ այդ պահին, ինչով էլ կարող էր պայմանաւորուած լինել այն, որ եթէ ընդդիմութիւնը կեդրոնացաւ դեսպանատների հարեւանութեամբ, իշխանութիւններն էլ հրապարակահանցին արտաքին գործերի նախարարին:

Այսուհանդերձ, Վարդան Օսկանեանի յայտարարութիւնն իհարկէ Հայաստանի ներքաղաքական կամ ներիշխանական շրջանակի համար իհարկէ եզակի անկեղծ եւ համարձակ թուացող յայտարարութիւն է՝ Մարտի 1-ի պատասխանատուն այդ օրուայ իշխանութիւնն է:

Նման բան երեւի թէ չի սսել այդ օրուայ եւ այսօր էլ 99,99 տոկոսով պահպանուած այդ իշխանութեան որեւէ մի ներկայացուցիչ: Սակայն շատ կարեւոր է շարունակութիւնը, որ ասում է նախկին արտգործնախարարը՝ «Այդ օրուայ իշխանութիւնը, որը չպէտք է թոյլ տար, որ այդպիսի բան լինէր»:

Սա առանցքայինն է Մարտի

1-ի հարցում: Այսինքն՝ իշխանութեան պատասխանատուութիւնն այն է, որ չի՞ կանխել Մարտի 1-ը, թէ՞ որն իրականացրել է Մարտի 1ը:

Սա է սկզբունքայինը, եւ այս հարցում Վարդան Օսկանեանի յայտարարութեան շարունակութիւնը ըստ էութեան չէզոքացնում է նրա յայտարարութեան համարձակութիւնն ու անկեղծութիւնը: Բայց գլխաւոր խնդիրը, իհարկէ, այստեղ նրա համարձակութիւնը կամ անկեղծութիւնը չէ, գլխաւոր խնդիրն այստեղ այն է, որ նմանօրինակ յայտարարութիւնները նպաստում են այն ընդհանրական գործընթացին, որի ամբողջ նպատակը հանրային գիտակցութեան մէջ Մարտի 1-ի պատասխանատուութեան լղղումն է:

Սա, ըստ էութեան, աստիճանաբար դառնում է ոչ միայն նախկին ու ներկայ ներիշխանական, այլ նաեւ ներքաղաքական իւրօրինակ կոնսենսուս, որտեղ նման լղղումը իշխանութիւններին ազատում է պատասխանատուութիւնից՝ եւ՛ այդ օրուայ, եւ՛ այս օրուայ, իսկ քաղաքական միւս ուժերին՝ իշխանութիւնների պատասխանատուութեանը հասնելու պարտաւորութիւնից:

Մարտի 1-ն այս առումով Հայաստանի ներքաղաքական կեանքում քաշուած մի բաւական խոշոր գիծ է, որն այդ դաշտի ահռելի մասը ըստ էութեան դրել է այդ գծից այն կողմ մնալու վտանգի առաջ, եւ զարմանալի չէ, որ այդ մեծ մասը համատեղ ջանքերով այս կամ այն կերպ լծուած է այդ գիծը լղղելուն, քանի որ ջնջելն իհարկէ անհնար է:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

Ձեր Մանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## «Ժառանգութիւն»-ը Նոր ԸՕ Նախագծի Դեմ Զամախմբման Կոչ է Անում

«Ժառանգութիւն» կուսակցութիւնը յայտարարութեամբ է հանդէս եկել, որում խորին մտահոգութիւն ու հիասթափութիւն է յայտնում նոր Ընտրական օրէնագրքի շուրջ ծաւալուած գործընթացների առնչութեամբ:

«Ներկայացուած նախագիծն այնքան արատաւոր է, որ մի շարք փոփոխութիւններին դէպքում անգամ չի կարող լիարժէք ապահովել արդար, թափանցիկ ու ազատ ընտրութիւններ: Այդպիսի փաստաթղթով ընտրութիւնների նախաձեռնումը արտագաղթի նոր ալիք է առաջացնելու եւ վերջնականապէս երկիրը նետելու է միակուսակցական ճահճի մէջ», - ասուած է ընդդիմադիր կուսակցութեան յայտարարութիւնում:

«Սթափ դատող բոլոր քաղաքական ուժերին, կազմակերպութիւններին, երիտասարդական հոսանքներին, քաղաքացիներին» «Ժառանգութիւն»-ը կոչ է անում «համախմբուել այս ազգադաւ գործողութիւնները դադարեցնելու եւ երկրում իրական փոփոխութիւններ կենսակոչելու գործի շուրջ»:

Կուսակցութիւնը վստահեցնում է, որ «աստար է կանգնելու բոլոր այն նախաձեռնութիւններին, որոնք միտուած են կանխելու իշխանութեան ապօրինի վերարտադրու-

թեան նախապատրաստումը, կուսակցական դիկտատուրայի հաստատումն ու քաղաքացիների իրաւունքների ոտնահարումը»:

«Համապետական ընտրութիւնների եւ, մասնաւորապէս, անցեալ տարուայ Դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքուէի համակարգային ու համատարած կեղծումից յետոյ իշխանութիւնները դարձեալ չանսացին միջազգային կառույցների յորդորները: Ներքաղաքական ճգնաժամը յաղթահարելու համար անհրաժեշտ էր նոր Ընտրական օրէնագրքի մշակման ընթացքում ընդունել միջազգային հանրութեան, հասարակական դաշտի եւ քաղաքական ուժերի առաջարկները, ինչը չարուեց», - ասուած է յայտարարութիւնում:

Ներկայացուած Ընտրական օրէնագրքի նախագիծով, ըստ «Ժառանգութեան», նահանջ է արձանագրուած գրեթէ բոլոր կարգաւորումներում, որոնք պէտք է ապահովէին ազատ, արդար եւ թափանցիկ ընտրութիւնների անցկացումը: «Միաժամանակ այսպէս կոչուած՝ համամասնական ընտրակարգի քողի տակ առաջարկուած է այնպիսի մեխանիզմ, որի ժամանակ աւելի վառ են դրսևորուելու մեծամասնական ընտրական համակարգի արատները», - համոզուած է ընդդիմադիր կուսակցութիւնը:

## Արթուր Պաղտասարեանը Ուզում է ԶԶ Նախագահ Դառնալ

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Նախկին ՕԵԿ նախագահ, նախկին ԱԽՔ, ներկայումս նորաստեղծ «Հայկական վերածնունդ» կուսակցութեան նախագահ Արթուր Բաղդասարեանը Սերժ Սարգսեանին առաջարկել է իրեն դիտարկել 2018 թուականի ՀՀ նախագահի հաւանական թեկնածուների շարքում:

Այդ պաշտօնին նաեւ հաւակնում է ՄԴ նախագահ Գագիկ Յարութիւնեանը, որը 2018 թուականին թոշակի անցնելու պատճառով թողնելու է ՄԴ նախագահի աթոռը: Արթուր Բաղդասարեանը, սակայն գտնում է, որ իր շաներն աւելի մեծ են, որովհետեւ երիտասարդ է:

Սերժ Սարգսեանը, ինչպէս յայտնի է, վերջին շրջանում առաւելութիւնը տալիս է երիտասարդութեանը: Փոփոխուած Սահմա-

նադրութեամբ 2018-ին նախագահն ընտրուելու է խորհրդարանի կողմից՝ խիստ սահմանափակ լիազօրութիւններով: Ճիշդ է, քաղաքական այլ պաշտօնների դէպքում՝ Պաղտասարեանին դժուար է երիտասարդ համարել, բայց «անգլիական թագուհու» դերի համար նա բաւակախին թարմ է:

Մեր տեղեկութիւններով, Բաղդասարեանը խոստացել է Սարգսեանին, որ մինչեւ 2017 թուականը եւ ոչ դրանից յետոյ՝ իր ղեկավարած կուսակցութիւնն անակնկալներ չի մատուցի:

«Հայկական վերածնունդ» կուսակցութեան լրատուական մասի ղեկավար է Առաքելեանը այս առիթով «Հժ»-ի հետ զրոյցում պնդում էր, որ Արթուր Բաղդասարեան-Սերժ Սարգսեան հանդիպում առհասարակ չի եղել»:

## Ռուսաստանը Մերժել է Զայաստանի Իշխանութիւնների Առաջարկը

Գագի գնի շուրջ հայ-ռուսական բանակցութիւնները առայժմ արդիւնք չեն տուել:

Երեւանը կը շարունակի ռուսական զազի դիմաց վճարել դոլարով, յայտնեց Էնդրեասիկայի եւ բնական պաշարների նախարար Լեւոն Յոյեանը:

«Բանակցութիւնները ընթացում են զուտ դոլարով գնման մասին: Նման խնդիր՝ ռուբլով վճարումների մասին չի քննարկուել», - ասաց Յոյեանը:

Փաստօրէն, այդ հարցն անգամ չի քննարկուել, մինչդեռ մօտ կէս տարի առաջ՝ անցած Սեպտեմբերին, Բեյրութում տեղի ունեցած ԵՏՄ միջկառավարական խորհրդի նիստին վարչապետ Յո-

վիկ Աբրահամեանը առաջարկեց Միութեան անդամ-պետութիւնների միջեւ հանրակիրների առևտուրն իրականացնել ռուբլով, ոչ թէ դոլարով:

Արժեզրկուած դրամի եւ ռուբլու պայմաններում գազի դիմաց դոլարով վճարելը լրացուցիչ բեռ է հայաստանեան գործարարների համար, որոնք իրենց արտադրանքը իրացնում են դրամով կամ ռուբլով: Ստացած դրամն ու ռուբլին թանկ դոլարի վերածելով՝ հայաստանցի գործարարները աւելի շատ գումար են յատկացնում կապոյտ վառելիքին՝ արդիւնքում ռուսաստանցի արտադրողի հետ յայտնուելով անհաւասար պայմաններում:

## «Մարտի 1-ի Զամար Այդ Օրուայ Իշխանութիւնը Պատասխանատուութիւն Ե Կրում»: Վարդան Օսկանեան

«Մարտի 1-ի համար այդ օրուայ իշխանութիւնը պատասխանատուութիւն է կրում», - Մարտ 14-ին խորհրդարանում լրագրողների հետ զրոյցում յայտարարեց նախկին արտգործնախարար, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) նախկին անդամ Վարդան Օսկանեան, ով պատրաստուած է առաջիկայում նոր կուսակցութիւն ստեղծել եւ մասնակցել 2017-ի խորհրդարանական ընտրութիւններին:

«Ես Մարտի 1-ի հարցին բազմիցս անդրադարձել եմ: Իհարկէ, դա մեր սեւ էջերից մէկն է, իհարկէ, այդ օրուայ իշխանութիւնը միանշանակօրէն պատասխանատուութիւն է կրում դրա համար, իշխանութիւնը պէտք է թողեր, որ նման բան տեղի ունենար: Ես այդ իշխանութեան մաս եմ եղել, եւ հենց Մարտի 1-ի օրը, խորհուրդ կտամ մի հատ թարմացնենք չի՛ռոյթիւնը, YouTube-ում կայ իմ ելույթը, որը կրակոցներից 3-4 ժամ առաջ է տեղի ունեցել, ուղղակի օրում զգալով, որ լարուած իրավիճակ է, եւ նման զարգացումներ կարող են լինել, ես փորձել եմ կանխել», - յայտարարեց նախկին արտգործնախարարը:

2008-ի Մարտի 1-ին, նախագահի նստավայրում հրաւիրած ասուլիսում Վարդան Օսկանեանը խօսում էր Ազատութեան հրապարակում ոստիկանութեան եւ խաղաղ ցուցարարների միջեւ տեղի ունեցած բախումներին մասին՝ ընդգծելով, թէ տուժածները մեղմ վնասուածքներ են ստացել:

«Վնասուածքների չափը բաւական մեղմ է, վնասուածքների տեսակը վկայութիւն է իսկապէս այն բանի, որ այնտեղ արտառոց ուժ այդ մարդկանց նկատմամբ ուղղակի չի կիրառուել», - յայտարարել էր Օսկանեանը:

## Ընտրութիւնների Մասնակցած Անձանց Ցուցակները Չեն Զրապարակուի

Իշխանութիւնը չի հրապարակի ընտրութիւններին մասնակցած անձանց ցուցակները, քանի որ չի ցանկանում խախտել միջազգային փաստաթղթերում ընդունուած սկզբունքներն ու Սահմանադրական դատարանի դիրքորոշումը:

«Ազատութեան» հարցին ի պատասխան, նման յայտարարութիւն արեց Կոնստանտին Մանուկեանը, որը միջազգային փաստաթղթերով ընդունուած սկզբունքները, չենք պատրաստուած խախտել Սահմանադրական դատարանի դիրքորոշումը, որի մասին Սահմանադրական դատարանն առնուազն երկու անգամ իր որոշումներում արտայայտել է: Այնուամենայնիւ, եթէ բուն նպատակը ընտրական գործընթացների վերահսկողութիւնն է, այդ առումով մենք պատրաստ ենք որոնելու մեխանիզմներ», - ասաց Յարութիւնեանը:

«Ազատութեան» դիտարկմանը, որ Սահմանադրական դատարանի որոշման մէջ չկայ ձեւակերպում, որով հակասահմանադրական է ճանաչուած ցուցակների



Ազգային ժողովի պատգամաւոր Վարդան Օսկանեան

Եթէ այսօր Վարդան Օսկանեանը յայտարարում է, թէ Մարտի 1-ի տասը զոհերի համար այդ օրուայ իշխանութիւնն է պատասխանատուութիւն է կրում, ապա 2008-ին նախագահի նստավայրում մեղադրուած էր Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ ընդգծելով, թէ նա չի ցանկանում տեղափոխուել քաղաքական դաշտ եւ չի ընդունում այն ժամանակ վարչապետ, նորընտիր նախագահ Սերժ Սարգսեանի երկխոսութեան առաջարկը:

Անդրադառնալով այն հարցին, թէ ի՞նչ ռեսուրսով է պատրաստուած ժողովրդի քուէն ստանալ՝ հաշուի առնելով 2008 թուականի Մարտի 1-ի արիւնալի իրադարձութիւններն ու դրանց թողած ծանր հետեւանքները, Վարդան Օսկանեանն ասաց, թէ հենց իր ռեսուրսով, կուսակցութեան ծրագրով եւ երկրի զարգացման տեսլականով:

Նախկին արտգործնախարարը խուսափեց ասել, թէ ովքեր են կազմելու իր կուսակցութեան կորիզը: Կրկին յայտարարեց, թէ Ռոբերդ Քոչարեանը իր կուսակցութեան հետ կապ չունի, սակայն հրաժարուեց կոնկրետացնել՝ Քոչարեանը կը յայտնուի՞ իր կուսակցութեան համամասնական ցուցակում, թէ՞ ոչ:

Հրապարակումը, Դաւիթ Յարութիւնեանն արձագանքեց՝ «Կարծում եմ, դուք հետեւեալի մասին պէտք է խօսէք՝ վիճարկուել է՝ արդեօ՞ք հակասահմանադրական է, որ չի հրապարակուած ցուցակները: Եւ այդ վիճարկման ժամանակ Սահմանադրական դատարանը արտայայտել է իր իրաւական դիրքորոշումը: Նշել է, որ միջազգային կազմակերպութիւնների կողմից, իրենց մարմինների կողմից ընդունուած փաստաթղթերում սահմանադրական վարչապետն էր համարուած էր զաղտնիութեան տարրը:

Եւ բառացիօրէն, թոյլ տուէք կրկնեմ Սահմանադրական դատարանի ձեւակերպումը. Սահմանադրական դատարանը պաշտպանում է այդ մօտեցումը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը պաշտպանում է, որ պաշտօնապէս ստորագրուած ցուցակները հրապարակելը խախտում է անձանց զաղտնիութիւնը: Եւ եթէ Սահմանադրական դատարանը արդէն այդպիսի ձեւակերպում տուել է, բացարձակապէս պարտաւոր չէ եւ չէր էլ կարող իր «Որոշեց» մասում գրել դա, որովհետեւ նման դրոյթ չկայ: Մենք ուղղակի շատ յստակ տեսնում ենք Սահմանադրական դատարանի դիրքորոշումը»:

ԼՈՒՐԵՐ

Յուճաստանի նախագահ. «Մենք Չենք Սոռանայ Չայոց Ցեղասպանությունը»



Յուճաստանի եւ Հայաստանի նախագահները ժամանման պահուն՝ պաշտօնական արարողութեան ընթացքին

Նախագահ Սերժ Սարգսեանը Յուճաստանի Հանրապետութեան նախագահ Պրոկոպիս Պավլոպուլոսի հրաւերով Մարտ 14-ին պաշտօնական այցով ժամանել է Յուճաստան:

Մինչ բարձր մակարդակի բանակցութիւնները, Սերժ Սարգսեանը Աթէնքում ծաղիկեպսակ է դրել Անյայտ զինուորի յուշարձանին եւ յարգանքի տուրք մատուցել:

Յուճաստանի նախագահի նստավայրում ՀՀ Նախագահի դիմաւորման պաշտօնական արարողութիւնից յետոյ նախագահներ Սերժ Սարգսեանը եւ Պրոկոպիս Պավլոպուլոսը առանձնազրոյց են ունեցել: ՀՀ նախագահը եւ Պրոկոպիս Պավլոպուլոսը, ով մինչ նախագահի պաշտօնի ստանձնելը եղել է Յուճաստան-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խմբի անդամ եւ բաւակա՜նաչափ տեղեկացուած է Հայաստանի վերաբերեալ կարեւորագոյն հարցերին, քննարկել են միջպետական յարաբերութիւնները օրակարգին, ինչպէս նաեւ երկկողմ եւ բազմակողմ միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպութիւնները շրջանակներում համագործակցութեանը, փոխշահաւէտ միջառնակցութեանը, փոխշահաւէտ միջառնակցութեանը ոլորտներում հայտնական գործակցութեան գարգացմանը, միջխորհրդարանական կապերին, Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացին, ԼՂ հիմնախնդրի կարգաւորման բանակցային գործընթացին վերաբերող հարցեր:

Առանձնազրոյցից յետոյ, ի պատիւ պաշտօնական այցով Յուճաստանի Հանրապետութիւնում գտնուող նախագահ Սերժ Սարգսեանի՝ նախագահ Պրոկոպիս Պավլոպուլոսի անունից տրուել է պաշտօնական ճաշ, որի ընթացքում երկու երկրների նախագահները հանդէս են եկել փոխադարձ բաժակաճառերով:

Ողջունելով ՀՀ Նախագահին եւ նրա գլխաւորած պատուիրակութեանը՝ Նախագահ Պրոկոպիս Պավլոպուլոսն ընդգծել է, որ Նախագահ Սերժ Սարգսեանի պաշտօնական այցը Յուճաստան եւս մէկ անգամ ցոյց է տալիս բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, երկու երկրների միջեւ յարաբերութիւնների եւ համագործակցութեան բարձր մակարդակն ու բացառիկ կարեւորութիւնը: Նշելով, որ հայերը եւ յոյները միմեանց հետ կապուած են ամուր պատմական, բարեկամական կապերով, նախագահ Պավլոպուլոսը շեշտել է, որ այսօրուայ միջպետական յարաբերութիւններին հիմք դարձած այդ պատմական կապերն ամրապնդուել են դարերի ընթացքում՝ դժուարին պայմաններում: «20-րդ դարի սկզբներին երկու ժողովուրդները միեւնոյն պատճառով տառապալից պահեր են ապրել, ինչպէս վկայում է պատմութիւնը՝ թէ՛ հայ ժողովրդի, թէ՛ Պոնտոսի յոյների, թէ՛ Փոքր Ասիայի յոյների նկատմամբ տեղի ունեցածը: Մենք չենք մոռանայ 1915թ. Հայոց ցեղասպանութիւնը: Հպարտ ենք, որ Յուճաստանն այն քիչ երկրներից էր, որ օթեան տուեց տարագիր հայերին, նաեւ Յուճաստանն առաջին երկրներից էր, որ ճանաչեց հայերի դէմ գործուած ցեղասպանութիւնը, իսկ միւս կողմից՝ Հայաստանի խորհրդարանը ճանաչեց պոնտոսիցիների դէմ գործուած ցեղասպանութիւնը:

Պատերազմի 5 տարիներու համեմատ իրավիճակը Հայկալի մէջ այժմ խաղաղ է՝ Չուրի եւ էլեկտրականութեան մատակարարումը վերականգնուած է քաղաքը արտաքին աշխարհի հետ կապող ճանապարհը բաց է: Տարբեր տուեալներով, պատերազմի պատճառով Սուրիոյ շուրջ հարիւր հազարանոց հայկական համայնքի 70 տոկոսը արտագաղթել է: Հնչակեան ներկայացուցիչները անդրադարձան Սահմանադրական հանրաքուէի ընթացքին արձանագրուած խախտումներուն եւ ընտրական նոր օրինագիծի որոշ կէտերուն, որոնք յոյս չեն ներշնչեր, որ զալ տարի տեղի ունենայիք Ազգային ժողովի ընտրութիւնները պիտի կայանան ազատ եւ արդար պայմաններու տակ: Հնչակեան ներկայացուցիչները շեշտեցին որ, դատական համակարգի անկախութեան բացակայութիւնը եւ կորուպցիայի համակարգային բնոյթը պատճառ կը հանդիսանան, որ շատ մը Ամերիկահայ գործարարներ երկար մտածեն իրենց հայրենիքէն ներս ներդրումներ կատարելէ առաջ: Սփիւռքի ամենէն հալաշատ կեդրոնը նկատուող Լոս Անճելըսի

Սերժ Սարգսյանը Յուճաստանում հանդիպեց ՄԴԿ ներկայացուցիչների հետ



ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան հանդիպում կ'ունենայ ՄԴԿ Յուճաստանի Վարիչ Մարմինի անդամներուն հետ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան պաշտօնական այցով Յուճաստան գտնուելու ընթացքին հանդիպումներ ունեցած է տեղւոյն հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ: Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հետ հանդիպումի ընթացքին, որուն ներկայ եղած է նաեւ Սփիւռքի նախարար

Հրանոյշ Յակոբեան, նախագահը ներկայացած է երկրի ապագայի մասին իր պատկերացումները:

Յուճաստանի շրջանի ՄԴԿ Վարիչ Մարմինը Հայաստանի Նախագահի հետ հանդիպման ներկայացա է ատենապետ Լեւոն Աղազարեանի, փոխատենապետ Յովիկ Շահինեանի, հաշուապահ Համբարձում Աղազարեանի եւ գանձապահ Արա Ալպարեանի կազմով:

Ռուսաստանում Չայոց Ցեղասպանութեան Ժխտման Քրեականացման Մասին Օրինագծի Գնահատագիրը

Ռուսաստանի Պետդումայում Սերգէյ Միրոնովի եւ Նիկոլայ Լեւիչեւի ներկայացրած Հայոց ցեղասպանութեան քրեականացման շուրջ օրինագծի հետագայ ճակատագիրը դեռեւս յստակ չէ:

NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում «Արդար Ռուսաստան»-ի մամուլի ծառայութիւնում նշեցին, որ Նիկոլայ Լեւիչեւն առաջիկայում վայր է դնելու պատգամաւորական լիազօրութիւնները՝ ԿԸՀ-ում աշխատանքի անցնելու կապակցութեամբ: Այսպիսով, նրա համահեղինակութեամբ տեղի ունեցած օրինագծի հետագայ ճակատագիրն նա ուղղակի առնչութիւն չի ունենայ:

Ապագայում օրինագծի «առաջխաղացմամբ» Սերգէյ Միրոնովը ստիպուած կլինի զբաղուել միայնակ, կամ այլ պատգամաւորներին օգնութեամբ: Բայց առայժմ յայտնի չէ, թէ ով կը միանայ այդ աշխատանքին:

Աւելի վաղ յայտնի էր դարձել, որ Ռուսաստանի կառավարութիւնն ու Գերագոյն դատարանը բացասական եզրակացութիւն են տուել այս օրինագծի կապակցութեամբ: Ընդունուած որոշումը պատճառաբանուել էր այն հանգամանքով, որ խախտուել է Կառավարութեան եւ Գերագոյն դատարանի կողմից օրինագծի քննարկման ժամկէտը:

ՌԻ կառավարութիւնն օրինագիծը պէտք է քննարկեր 30-օրուայ ժամկէտում, սակայն կառավարութիւնն աւելի շատ ժամանակ էր ինդրել՝ մինչեւ յունուարի 9-ը, բայց քննարկումը ձգձգուել էր մինչեւ փետրուարի 9-ը:

Դեսպան Ռիչըրտ Միլլզ

Շարունակուած էջ 1-էն

մէջ, Դեսպան Միլլզ ունեցաւ նաեւ հրապարակային ելոյթներ, որոնց ընթացքին ան պարզեց իր տեսակէտները Հայաստանի ներկայ իրավիճակի մասին: Այն յայտնեց թէ, որոշ բնագաւառներէն ներս արձանագրուած է դրական յառաջդիմութիւն, յատկապէս կաշառակերութեան դէմ պայքարի գծով դեսպանատան եւ Հայաստանի կառավարութեան միջեւ համագործակցութիւնը տուած է դրական որոշ արդիւնքներ: Այլ մարզերու մէջ, ըստ Դեսպանի, հարցերը աւելի դանդաղ կ'ընթանան:

Միացեալ Նահանգներու Դեսպան Ռիչըրտ Միլլզ բարձր գնահատեց Հայաստանի երիտասարդութեան մասնակցութեամբ՝ հասարակական կազմակերպութիւններու ծաւալած գործունէութիւնը, որոնք յոյս կը ներշնչեն երկրի ապագային նկատմամբ:

Սուրիահայերը Լաւատես Եմ

Շարունակուած էջ 1-էն

ուի»,- ըսած է Պողիկեան: «Գանձասար»-ի խմբագիրը յայտնած է նաեւ, որ կարեւորը ոչ թէ Պաշար Ասատի իշխանութեան երկարաձգումն է, այլ Սուրիոյ խաղաղութիւնն ու ժողովրդի ընտրութիւնը: Եթէ նոյնիսկ իշխանութեան գան Ասատի հակառակորդները, հայկական համայնքին համար վատ չի կրնար ըլլալ:

Պատերազմի 5 տարիներու համեմատ իրավիճակը Հայկալի մէջ այժմ խաղաղ է՝ Չուրի եւ էլեկտրականութեան մատակարարումը վերականգնուած է քաղաքը արտաքին աշխարհի հետ կապող ճանապարհը բաց է: Տարբեր տուեալներով, պատերազմի պատճառով Սուրիոյ շուրջ հարիւր հազարանոց հայկական համայնքի 70 տոկոսը արտագաղթել է: Հնչակեան ներկայացուցիչները անդրադարձան Սահմանադրական հանրաքուէի ընթացքին արձանագրուած խախտումներուն եւ ընտրական նոր օրինագիծի որոշ կէտերուն, որոնք յոյս չեն ներշնչեր, որ զալ տարի տեղի ունենայիք Ազգային ժողովի ընտրութիւնները պիտի կայանան ազատ եւ արդար պայմաններու տակ: Հնչակեան ներկայացուցիչները շեշտեցին որ, դատական համակարգի անկախութեան բացակայութիւնը եւ կորուպցիայի համակարգային բնոյթը պատճառ կը հանդիսանան, որ շատ մը Ամերիկահայ գործարարներ երկար մտածեն իրենց հայրենիքէն ներս ներդրումներ կատարելէ առաջ: Սփիւռքի ամենէն հալաշատ կեդրոնը նկատուող Լոս Անճելըսի

### ՀՈՒՍԻ ՊԱՊԸ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՔԱՐ ՆՈՒԻՐԱԾ Է ԿԻՒՄՐԻԻ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ֆրանսիս Պապը Կիւմրիի Սրբոց Նահատակաց առաջնորդանիստ հայ կաթողիկէ տաճարին նուիրած է խորհրդանշական քար մը՝ վերցուած Հռոմի Ս. Պետրոսի Մայր տաճարի պատէն՝ իրբեւ նշան միութեան եւ հաղորդութեան:



Կարտինալ Անճելօ Կոմասթրի այնուհետեւ կը գրէ. «Լիտուրգիայէն, որ Ողորմութեան Սուրբ Տարուան ընթացքին ձեր սիրտերը խաղաղութեամբ կը լեցուին, ինչ որ Աստուածատուր շնորհ մըն է, որպէսզի կարենաք սերմանել սիրտերուն մէջ բոլոր այն մարդոց, որոնք պիտի հանդիպին ձեզի»: Ըստ առաջնորդարանի հաղորդագրութեան, խորհրդանշական քարը պիտի գետեղուի Կիւմրիի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ պատին մէջ:

Հայ կաթողիկէ առաջնորդարանի մամուլի ղեկանին համաձայն՝ պապին անուսով քարը ուղարկած է Վատիկանի Ս. Պետրոսի Պապական աթոռանիստ տաճարի լուսարարապետ Կարտինալ Անճելօ Կոմասթրի՝ յատուկ նամակի մը ընկերակցութեամբ: 8 Դեկտեմբեր 2015 թուականին նամակին մէջ կարտինալը գրած է, որ Պապին նուիրած քարը գետեղուած էր Ս. Պետրոսի տաճարի Ս. Դրան մէջ, 2000-ին՝ ձեռամբ Ս. Յովհաննէս Պօղոս Բ. Պապի: Քարը Ս. Պետրոսի տաճարէն վերցուած է Ողորմութեան յոբելեանական տարուան բացման առթիւ՝ 8 Դեկտեմբեր 2015-ին, Անարատ Յղութեան տօնին: Գրուած է նաեւ, որ այս քարը կը նուիրուի «իրբեւ նշան սերտ հաղորդութեան սրբազան քահանայապետին հետ, որ յաջորդն է Պետրոս առաքեալին, եւ որպէս մասնակցութիւն հոգեւոր շնորհներու յոբելեանական տարուան»:


### ԱՆԳԼԻԱՅՈՒՄ ԳՐԱՍԵՂԱՆԻ ԳԱՂՏՆԻ ԴԱՐԱԿՈՒՄ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԵԼ Է ԽՐԻՍԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԶԵՌԱԳՐՈՎ ԳՐՈՒԱԾ ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Օրերս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանը հարստացաւ բացառիկ արժէք ներկայացնող մի ձեռագրով՝ Թանգարանին յանձնուեց հայ կաթողիկոս, մեծ մտաւորական եւ գրող Խրիմեան Հայրիկի ձեռագրով գրուած բանաստեղծութիւնների տետրը:



Գիրն իր մօտ է յայտնուել պատահաբար. Անգլիայից Աբրահամ Մնացականեանի դուստրը այն գտել է իր բարեկամների տանը, որոնք էլ իրենց հերթին մօտ 40 տարի առաջ մի հայի տուն են վարձել: Վարձակալները գնել են տան սեղանը, որը գաղտնի դարակ է ունեցել: Հենց այդ դարակում էլ ընդամենը վերջերս յայտնաբերուել է տետրը, որի հետ նաեւ՝ Խրիմեան Հայրիկի լուսանկարն ու հայ որբերի լուսանկարներ:

Տետրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին է բերել երուսաղէմահայ մտաւորական, բանաստեղծուհի Անուշ Նազգաշեանը, որն էլ «Արեւելքին» յայտնեց լուրը: Իր չափածոյ գործը Խրիմեան Հայրիկը վերնագրել է «Թագաւորաց ժողով»: Ըստ Անուշ Նազգաշեանի, դիտարկումներ կան, որ խօսքը վերաբերում է Պեռլինի վեհաժողովին, որտեղ առաջին անգամ միջազգային քննարկման է դրուել Հայկական հարցը: Յայտնի է, որ Կոստանդնուպոլսից Պեռլինի վեհաժողովին մասնակցում էր ազգային



պատուիրակութիւն՝ Խրիմեան Հայրիկի գլխավորութեամբ, որին թոյլ չէին տուել մասնակցել վեհաժողովին: Խրիմեան Հայրիկը փորձել է այդ դէպքի հետ կապուած իր մտածումները ամփոփել բանաստեղծութեամբ:

Ինչպէս մեզ հետ գրոցում նշեց Անուշ Նազգաշեանը, ձեռա-

### 100 LIVES-Ը ԵՒ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԸ ՀԻՄՆԱԾ ԵՆ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՆՈՐ ՄՐՑԱՆԱԿ

100 LIVES նախաձեռնութիւնը եւ (International Center for Journalism, ICFJ) հիմնած են լրագրողական նոր մրցանակ՝ ճանաչման արժանացնելու այն խիզախները, որոնք կը լուսաբանեն աշխարհի մէջ տեղի ունեցող աղէտներն ու ոճրագործութիւնները:



ICFJ կազմակերպութիւնը՝ «Աւրորա» մրցանակին հետ համագործակցութեամբ, «Սկզբունքային լուսաբանում» մրցանակը պիտի շնորհէ 2016-ի Ապրիլ 24-ին, Երեւանի մէջ՝ «Աւրորա» մրցանակաբաշխութեան ընթացքին: 100 LIVES նախաձեռնութիւնը իր երախտագիտութիւնը կը յայտնէ ցեղասպանութեան տարիներուն հայերուն փրկութեան ձեռք մեկնած խիզախներուն, եւ կ'աջակցի այն անհատներուն եւ կազմակերպութիւններուն, որոնք այսօր նոյն ոգիով կը բարեփոխեն աշխարհը:

Եւ միջամտեցին: Միեւնոյն նուիրումը մենք այսօր տեսնում ենք Սիրիայում, Սուտանում եւ աշխարհի բազմաթիւ այլ վայրերում, ուր պատերազմ ու աւերածութիւններ են», - ըսած է 100 LIVES նախաձեռնութեան համահիմնադիր Ռուբէն Վարդանեան: ICFJ կազմակերպութիւնը «Սկզբունքային լուսաբանում» մրցանակը պիտի շնորհէ այն լրագրողին, որ դժուարին պայմաններու մէջ կ'ընդգծէ մարդասիրական կարեւոր հիմնարկները՝ ներկայացնելով վատագոյն իրադրութեան մէջ գտնուողները:

100 LIVES նախաձեռնութիւնը «Աւրորա» մրցանակը շնորհելով ճանաչման կ'արժանացնէ մերօրեայ հերոսները, որոնք կ'օգնեն մարդոց՝ անձնուիրաբար եւ մեծ ջանքերով: Միանալով 100 LIVES նախաձեռնութեան «Աւրորա» մրցանակի ընտրող յանձնաժողովի համանախագահ Ճորձ Քլունիին՝ ICFJ կազմակերպութիւնը Երեւանի մէջ պիտի յայտարարէ լրագրողական այս նոր մրցանակի յաղթողը:

«ICFJ կազմակերպութիւնը պատիւ ունի համագործակցելու 100 LIVES նախաձեռնութեան հետ՝ նպատակ ունենալով կարեւորել այն լրագրողներու աշխատանքը, որոնք կ'աշխատին աշխարհի ամենաթէժ կէտերու մէջ: Մենք հպարտ ենք, որ կրնանք այսպիսի նշանակալի ճանաչման արժանացնել լրագրողները», - նշած է ICFJ-ի նախագահ Ճոյս Պարնաթան:

«Չափազանց մեծ է այն ազդեցութիւնը, որ ժուռնալիստիկան ունի մարդկանց խնդիրները լուսաբանելու եւ մեղմելու գործում: Միջազգային լրագրողներին՝ Հայոց ցեղասպանութեան տարիներին տեղի ունեցածը լուսաբանելու պատրաստակամութեան եւ ջանքերի շնորհիւ, շատ շատերը ոտքի ելան

**El Niño Awareness and Public Forum**

Presented by  
 Armenian Athletic Association Ladies Society  
**THURSDAY, MARCH 24, 2016**  
 Starting at 7:00 p.m. – 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104  
 Keynote Speaker  
 Pasadena Police Chief Phillip Sanchez  
**FREE ADMISSION • ALL ARE WELCOME**  
 Refreshments will be served

### ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ-ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

#### ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԻԹԵԱՆ

Անախորժ եւ անտեղի գուցէ գտնեն ոմանք այս նիւթին մասին խօսելը Հնչակեան մամուլի մէջ նկատի առնելով ազգային աւանդական երեք կուսակցութիւններու միջեւ ողջունելի նկատուող համերաշխ գոյակցութիւնը: Եւ որովհետեւ այդպիսի գոյակցութեան պահանջներն են ամրացման կարեւորութեան վրայ պէտք է շեշտակիօրէն գործադրել, մարդ իրաւունք ունի հարց տալու թէ ինչը մղեց Դաշնակցութեան որ ուզէ դառնալ շաքառապատում (icing) հայրենի իշխանութեան մը որ ըստ Փարիզ հրատարակուող

«Նոր Յառաջ»-ի Մարտ 1 թուակիր խմբագրականին «Թաւանող սակաւապետական պետական համակարգ մըն է» եւ «Զեղծարարութիւններ իրագործող վարչակարգ մը»:

Ուրեմն ինչպէ՞ս բացատրել ներկայ գործակցութեան դրդապատճառը կամ միտքն ու նպատակը երկու գործակցող կողմերուն, մանաւանդ Հանրապետականներուն, որոնք սակաւապետութեան (Oligarchy) խամաճիկը (Marionette) ըլլալով հանդերձ ձեռք կ'երկարեն կողմի մը որ ընկերային արդարութիւն դաւանիլ կը քարոզէ եւ ինքզինք ընկերավարական շարժումներու միջազգայնական ժողովներուն մասնակից կը դարձնէ: Առաւել, նկատի ունենալով Հանրապետականներու վայելած բացարձակ մեծամասնութիւնը ազգային ժողովին մէջ եւ պետական կառուցիչ ամէն ոլորտին մէջ, մարդ իրաւունք ունի հարց տալու թէ հաստատ ու զօրաւոր դիրքով իշխանութեան տէր կանգնողը ինչ տեսակ պէտք զգաց Հայաստանի մէջ գործակցելու ոչ այնքան քաղաքական ուժ ներկայացնող կողմի մը հետ:

Կարելի է որոշ գուշակութիւն մը ընել հոս ու փորձել բացատրել այդ գործակցութեան պատճառը առանց յաւակնելու անշուշտ որ ճիշդ կրնայ ըլլալ այդ գուշակութիւնը:

Իրապաշտութիւնը կը մղէ հայ մարդուն ընդունելու որ սփիւռքի տարածքին ամենէն ծաւալուն ներկայութիւն ունի Դաշնակցութիւնը: Անոր հովանաւորութիւնը վայելող ազգային (հայ դատի), եկեղեցական, մշակութային, կրթական,

մարզական-սկառտական եւ բարեսիրական կառույցները սփիւռքահայ կեանքին մէջ առաջատար դեր կը խաղան: Այդպիսի կուսակցութեան մը դերը սփիւռքի մէջ յար ու նման է Հանրապետականներու ունեցած դերին Հայաստանի մէջ: Եւ սակաւապետութիւնը որ կը կիրարկուի Հայաստանի մէջ կարծէք կ'ուզէ իր հսկողութիւնը (control) ծաւալել ու ընդարձակել Հայաստանէն դուրս Դաշնակցութիւնը դարձնելով իր գործակալը (agent) աշխարհի տարածքին, որպէսզի այս վերջինը շատ աղմուկ չբարձրացնէ դուրսը (protocol-ներու օրինակով) եւ ուղղուի հայրենի իշխանութեան ցուցմունքներով:

Դաշնակցութիւնը անշուշտ պիտի չուզէ այդպիսի դեր կատարել, սակայն, քանի մը նախարարութիւն իրեն տուող Մարզիսեանի իշխանութիւնը, որ բաշտութիւնը ունեցաւ մեծագոյն ընդդիմադրութիւն կազմող Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանի ակնշըքաշելու եւ գայն քաղաքական բեմէն հեռացնելու, կրնար նաեւ «ականջը քաշել» Դաշնակցութեան Հայաստանի մէջ:

Դաշնակցութիւնը, ատենօք, երբ Սովետական էր Հայաստանը, կը մեղադրէր սփիւռքի տարածքին գործող ազգային միւս կուսակցութիւնները որպէս գործակալ՝ համայնավար ռեժիմին: Այդպիսի մեղադրանքին որպէս պատասխան այդ միւս կուսակցութիւնները կը յայտարարէին որ համայնավար ռեժիմին կը պարտի հայութիւնը իր «մնացեալ» հարեւիքի գոյութեան եւ պահպանման երաշխիքը:

Պաղ պատերազմի գոհ դարձած էր այն ատեն սփիւռքահայութիւնը եւ այդ ժամանակը թող դառնութեամբ յիշուի եւ երբեք չկրկնուի: Այսօր, սակայն, չկայ համայնավարութիւն Հայաստանի մէջ, այլ կայ սակաւապետութիւն: Արդա՞ր է Դաշնակցութիւնը կոչել Հայաստանի սակաւապետութեան գործակալը սփիւռքի մէջ. եւ ինչ արդարացում կրնայ Դաշնակցութիւնը տալ բոլոր անոնց, որոնք այդ դերին մէջ կ'ուզեն գայն դրուած ըլլալով մեղադրել:

Ժամանակը իր մէջ ունի պատասխանը ամէն հարցումի:

### Վեցետիկի Յանձնաժողովի

#### Շարունակուած էջ 1-էն

ՀԱԿ-ը Ընտրական Օրէնսգրքի նախագծի վերաբերեալ իր չորս առաջարկներուն աւելցուցած է եւս մէկ առաջարկ՝ մաքուր համամասնական ընտրակարգ, առանց մեծամասնականի տարրերու:

«Այս պահին, այսպէս ասեմ, նախագիծը կայ, դա ընտրութիւններից յետոյ ստորագրուած ցուցակների հրապարակումն է, դա ցուցակների մաքրումն է, ընդ որում այդ մաքրումը արուի այնպէս, ինչպէս վրաստանում 2011 թուականին արուեց, երբ որ ստեղծուեց համատեղ յանձնաժողով՝ ընդդիմութիւն, իշխանութիւն եւ քաղաքացիական հասարակութիւն հասարակ մասնակցութեամբ: Երրորդը՝ տեսախցիկների տեղադրումն է

եւ առցանց հեռարձակումը, չորրորդը՝ մատերի թանաքոտումն է եւ հինգերորդը՝ ընտրատարածքային ցուցակների մերժումը, այսինքն՝ որ գործող համամասնական ընտրակարգը պահպանուի:

Սրանք այդ հինգ պահանջն են, որ դնում ենք եւ բացատրում ենք, որ առանց այս պահանջների իրականացման Հայաստանում պահպանուելու է այն ընտրակեղծարարութեան համակարգը, որ տարիներ շարունակ մերժում է ժողովրդի կամարարտայայտութիւնը», - ըսաւ Զուրաբեան:

Միւս կողմէ, Հայաստանի իշխանութիւնները կը շարունակեն պնդել, որ վեցետիկի Յանձնաժողովը վերապահումներ ունի ընտրութեան մասնակցածներու ցուցակներու հրապարակման հարցով:

### ՄՈՍԿՈՒԱՅԻ ԱՆՍՊԱՍԵԼԻ ԳԱՂՏՆԱԶԵՐԾՈՒՄԸ

#### ՄԵՏԱՔՄԻԱ ԾԱԼՈՒՆՑ

«Թուրքիան իր գործողութիւններով ապակայունացնում է իրավիճակը Մերձաւոր Արեւելքում, իսկ Հայաստանը կարեւոր դեր ունի խաղաղութեան ապահովման գործում»,- Երեւանում յայտարարել է Ռուսաստանի Պետդուժայի նախագահ՝ Սերգէյ Նաբիշկինը:

ՀԱՊԿ Խորհրդարանական վեհաժողովի խորհրդի՝ Երեւանում կայացած նիստին Նարիշկինը նաեւ նշել է. «Յատուկ մտահոգութիւն են առաջացնում Թուրքիայի կողմից Սիրիայի տարածքի ռմբակոծումները եւ Թուրքիայի այլ գործողութիւնները, որոնք ուղղուած են այս պայթիւնավտանգ տարածաշրջանում իրավիճակի ապակայունացմանը: Հայաստանն իր աշխարհադրական դիրքով միջազգային լարուած օճախներին մօտ լինելով՝ կազմակերպութեան մէջ յատուկ դեր ունի, եւ մենք պէտք է հաշուի առնենք նրա փորձը, այդ թւում եւ խորհրդարանական փորձը՝ խաղաղութեան ապահովման գործում»:

Ռուսաստանի Պետդուժայի նախագահը, ով նաեւ ՀԱՊԿ Խորհրդարանական վեհաժողովի խորհրդի նախագահն է, Հայաստանի Ազգային ժողովում յայտարարել է, որ այսօր «էրէբունի» օդանավակայանի օրինակով կը ծանօթանան կովկասեան տարածաշրջանում ՀԱՊԿ-ի պաշտպանական հնարաւորութիւններին:

Նիստի հիմնական մասը փակ է եղել լրագրողների համար: Վեհաժողովում Հայաստանի պատուիրակութեան ղեկավար՝ Ազգա-

յին ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը նիստից յետոյ վերահաստատեց՝ Հայաստանն աջակցում է ահաբեկչութեան դէմ պայքարում Ռուսաստանի գործողութիւններին: Նաեւ անդրադարձաւ դարաբաղեան հարցին, յայտարարելով. «Մենք յանցագործութիւն ենք համարում թուրքական կողմից ռուսական Սու-24 կործանիչի խոցումը, ինչպէս եւ յանցագործութիւն ենք համարում դարաբաղա-ատրպէյճանական սահմանին Ատրպէյճանի կողմից հայկական ուղղաթիռի խոցումը: Մեր կարծիքով՝ ՀԱՊԿ անդամ երկրների պատուիրակութիւնները բոլոր միջխորհրդարանական հարթակներում պէտք է միասնաբար հանդէս գան, քանի որ մենք դաշնակիցներ ենք»: Շարմազանովը նաեւ յայտարարեց, որ Ատրպէյճանի կողմից դարաբաղեան հակամարտութիւնը ուժային ճանապարհով լուծելու փորձերն անընդունելի են:

ուած են միջազգային խորհրդատու յանձնախումբի մը կողմէ, որուն անդամներն են Շուշան Աւագեան, Վարդան Ազատեան, Ռէմոն Գէորգեան, Արմինէ Իշխանեան, Յակոբ Կիւլլիւճեան, Արտաշէս Մարկոսեան, Սմբատ Յովհաննիսեան եւ Արա Սանճեան։ Յանձնախումբը աշխատած է Հայկական Համայնքներու բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանին եւ բաժանմունքի աւագ ծրագրի վարիչ Անի Կարմիրեանին հետ։

Այս կոչը ուղղուած է երկու նպատակով՝ թարգմանիչներ ընտրել այս մատենաշարին համար ու որակեալ թարգմանիչներու մեր ցանկը ճոխացնել։ Կը խնդրենք հնարաւոր թարգմանիչներէն, որ մեզի դիմեն միայն եթէ կը փափաքին վերի ցանկէն խորագիր մը կամ խորագրեր թարգմանել բնագրային լեզուէն հայերէնի (արեւմտահայերէն կամ արեւելահայերէն)։

Դիմումները պէտք է յղուին Հայկական Համայնքներու բաժանմունքին մինչեւ 5 Ապրիլ 2016, հետեւեալ իմա կի հասցէով՝ carmenias@gulbenkian.pt: Նիւթի տողին մէջ յստակօրէն պէտք է նշուի՝ "Translation Series, Call for Translators": Դիմումը պէտք է բաղկանայ հետեւեալ պարտադիր փաստաթուղթերէն.

- Պարտադիր փաստաթուղթեր . Կենսագրական՝ դիմորդի կապի տուեալներով (իմակ, հեռաձայն, հասցէ)։
- Վերի ցանկէն այն խորագիրը կամ խորագրերը, որոնց թարգմանութեամբ շահագրգռուած է թարգմանիչը։
- Վերոյիշեալ գիրքերու բնագրային լեզուէն (այսինքն՝ իտալերէնէ, անգլերէնէ, ֆրանսերէնէ եւ գերմաներէնէ) դէպի հայերէն կատարուած թարգմանական նախընթաց աշխատանքի մը նմոյշը (առնուազն 20 էջ)։

Շաբ.բ էջ 19

ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ  
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՀԱՅ ՖԻԼՄԻ ՓԱՌԱՏՈՆ, Տեղի Կ'ունենայ Ամսուայ Առաջին Եւ Երրորդ Հինգշաբթի Օրերը  
Հայ Վարժարարական Ֆիլմ; Հինգշաբթի 17 Մարտ 2016, երկույան ժամը 7:30-ին  
ՀԿԲՄ Կարօ Սողանալեան Սրահէն Ներս. 1060 N. Allan Ave., Pasadena, CA.  
Մուտք՝ Լուիրատուութիւն

# DOCUMENTARY FILMS

GAIDZ Youth Organization – PRESENTS - GAIDZ Movie Night  
ARMENIAN Film Festival; Every 1<sup>ST</sup> & 3<sup>RD</sup> Thursday of the Month  
Armenian Documentary Movie; Thursday, March 17, 2016 at 7:30 pm  
AEBU Garo Soghanalian Hall, 1060 N. Allan Avenue, Pasadena, CA. Entrance Fee: DONATION

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՇՄԱՆԴԱՍ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՖՈՆԴ»Ի ԱԶԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԱԲԱՐՏԻՑ ԳԻԻՄՐԻԻ 7-ՀՐԵՇՏԱԿԱՑ ՄԱՆԿԱՏԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Գիւմրի քաղաքի «էլլիթա» նախադպրոցական ուսումնական հաստատութեան տնօրէն Լիլիթ Համբարձումեանը տեղեկացում է մեզ, որ մեծ ուրախութեամբ եւ գոհունակութեամբ 10 ամիս տեւող (2015-2016 տարիների միջեւ) տքնաջան շինարարական աշխատանքներից յետոյ հիմնովին նորոգուեց «էլլիթա» ուսումնական հաստատութեան կից 34 հազար ոտք տարածք ունեցող 2 յարկից բաղկացած շէնքը, որը ըստ Հայաստանի ծնողազուրկ հաշմանդամ երեխաների ֆոնդի նախագահ Յովհաննէս Բալայեանի առաջարկութեամբ եւ Գիւմրիի քաղաքապետ Սամուէլ Բալասանեանի համաձայնութեամբ այսուհետ կոչւելու է «Եօթ Հրեշտակաց մանկատուն», ի յիշատակ Գիւմրիի բնակիչներ Աւետիսեան ընտանիքի եօթ անմեղ գոհուած անդամների յաւերժացմանը:

Եւրոպական արտադրութեան սալիկներով եւ կառուցւել էլեկտրականութիւնը, ջրամատակարարումը, կոյուղին եւ ջեռուցումը: Տեղադրուել են ջեռուցման գազի 2 կաթնալի եւ ջրի բազ (անօթ) աւտոմատ պոմպով:

Նախադպրոցական ուսումնական հաստատութեան ճակատային մուտքի քանդուած, ոչ պիտանի ցանցի պարիսպը հեռացուել է եւ իրականացուել է մետաղական շրջանակներով ցանցային նոր պարիսպ:

Համաձայն պայմանագրի, շինարարական աշխատանքները իրականացուել է «Մ. Լամբարեան» ՍՊԸ-ի կողմից:

Եօթ Հրեշտակաց մանկատան տարածքը ապահովելու է շուրջ 300 երեխաների կեանքի առօրեան: Եւ շատ շուտով Գիւմրիի վսեմաշուք քաղաքապետ Սամուէլ Բալասանեանի եւ Գիւմրիի ամբողջ հա-



Արդէն ֆոնդիս 2016-2017 տարեշրջանի ծրագրերի վրայ են, Հայաստանի սահմանամերձ գիւղերում գտնուող մանկատուն դպրոցների վերակառուցման չորս ծրագրերը, որոնց վերջնական ընտրութիւնը եւ շինարարութիւնը կը սկսուի շուտով:

«Վստահութիւնը սատարում է ծրագրերի, որոնք կը բարելաւեն մանկատան երեխաների կեանքը». այդ հաւատով գոտեպնդուած, «Հայաստանի ծնողազուրկ հաշմանդամ երեխաների» Գործադիր մարմինը իր շրջապատով շարունակելու է հայրենակերտման վսեմ գաղափարի տարածումը յանուն հայրենիքի հզօրացման եւ յանուն մեր հազարաւոր կարիքաւոր երեխաների ապագայի եւ նրանց երջանիկ կեանքի գալիք օրերի իրականացմանը:

Armenian American Orphan Christmas Fund, Inc. P. O. BOX 250038, Glendale, CA 91225 or AAOCF, Inc. Executive Office 626 W. Colorado St., Glendale, CA 91204 Non-Profit organization A Tax-Exempt 501 (c) 3 Charity Direct Deposit: Any Wells



Fargo Bank Acc. #1736835495  
Tel: 818-246-0125; 818-239-6880, 818 292-9619  
forourkids99@gmail.com  
www.forourkids99.com



Մասնաշէնքի ամբողջ շինարարութեան աշխատանքները կատարուել են ամենաբարձր որակով: Հիմնովին նորոգուել է ննջարանային մասնաշէնքը 379.0 քառ. մետր մակերեսով: Քանդուել է մասնաշէնքի ոչ պիտանի տանիքը եւ կառուցուել է նորը:

Պատուհանների բացուած քները վերաշարուել են եւ ամբողջութեամբ տեղադրուել են նոր դռներ եւ պատուհաններ:

Վերանորոգուել են 7 սենեակ 3 սանհանգոյց (զուգարան) 3 բաղնիքներ, 3 խոհանոցներ: Սենեակներից ամբողջութեամբ հեռացուել են արդէն քայքայուած պատերի եւ առաստաղների սուաղները եւ իրականացուել նորը: Պատերը եւ առաստաղները ներկուել են բարձրորակ լատեքսային ներկով, յատակները իրականացուել են եւրոպական արտադրութեան լամինատից:

Զուգարանի եւ խոհանոցների պատերը եւ յատակը երեսապատուել են եւրոպական արտադրութեան բարձրորակ սալիկներով, կառուցուել է կախովի առաստաղները:

Լուսցքատան նախկին մուտքը վերաշարուել է, բացուել է նոր մուտք, տեղադրուել է դուռ եւ լուսամուտներ, երեսապատուել է

մայքի ներկայութեամբ բացման արարողութիւնը տեղի կ'ունենայ եւ մեր անուշիկ երեխաները կը տեղափոխուեն իրենց նորոգուած տունը:

«Հայաստանի ծնողազուրկ հաշմանդամ երեխաների ֆոնդի» Գործադիր մարմինը իր խորագրաց շնորհակալութիւններն է յայտնում հազարաւոր ամերիկահայ այն հայրենակիցներին, որոնք ֆոնդի գոյութեան 16 տարիների ընթացքին իրենց սրտաբուխ նուիրատուութիւններով

(մէկուկէս միլիոն դոլարի շուրջ) սատար կանգնեցին կազմակերպութեանս, իր դպրոցաշինութեան վսեմ գաղափարները իրականացնելու համար: «Գիւմրիի 7-Հրեշտակաց մանկատան» աւարտումով ֆոնդիս դպրոցա-մանկատունների շինարարութիւնների թիւը հասնում է 7-ի, իսկ Մ. Ծննդեան տօներին կազմակերպուած հանդէսների ընթացքում Հայաստանի ամբողջ տարածքում, ֆոնդի կողմից մինչեւ օրս 205 հազար կարիքաւոր երեխաներին նուէրներ է բաժանուել: Նաեւ վերջին տարիների ընթացքում ֆոնդի կողմից 1400 ծանրոցներ հագուստ եւ ուտելիք է առաքուել մանկատներին:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ԸՆՈՂԱՅՆԵԼ (626) 797-7680

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
ՀԱՅ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՇԱՐԱԹՐԵԱՅ ՎԱՐՇԱՐԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Որպիտեամբ կը յայտնենք թէ միտքեանս Հայ Ընտանեկան ՁԻՒ Ծաբաթօրեայ վարժարանի դասերը կ'ընտելի մէջ պիտի վերսկսին Ծաբաթ. Մարտ 19-էն սկսեալ:

Արձանագրութիւնները տեղի կ'ունենան Յետեւեալ 3 օրերուն.  
— Ծաբաթ. Փետրուար 27  
— Ծաբաթ. Մարտ 5  
— Ծաբաթ. Մարտ 12, 2016, ստատուան ժամը 10-12  
Հասցէն է Incarnation Community Center  
214 West Fairview Avenue  
Glendale, CA 91202  
(N. Central Ave.ի և Glenside Blvd.ի մօտերը):

- Կ'ընդունինք 4-14 տարեկան փոքրիկներ
- Կը դաստանդոյին հայերէն լեզու, երգ, ամուսն եւ ազգային դաստիարակութիւն
- Դասի ժամերն են ստատուան 10-12

Սիրեցի հայրենակիցներ, Ձեր սիրտուն զաւակներուն հայեցի դաստիարակութիւնը վստահեցե՛ք միտքեանս կրկար տարիներու կրթական փորձառութիւն ունեցող մեր վարժարանին:

Մանրամասնութեան համար ընտանայնէ՛լ  
(562) 715-8730 • (818) 326-4725  
ՏԵՐԵՆՆՈՒԹՅՈՒՆ

### ՔԵԱՄԱՐԱ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



#### Ռ. ԿՈՐԻԻՆ

Իրանահայությունների պատմությունը շատ հին վաղեմի անցեալ ունի: Հայերի գանգոստանային բնակությունը Իրանի հարավային կողմում սկսում է Շահ Աբասի բռնագաղթից տասնեօթ դարի սկզբում:

Համաձայն պատմաբան Արաքել Դաւրիթեցու՝ Պարսկաստանի Շահ Աբասը Սաֆաւին 1604 թ. Օսմանեան թուրքիայի հետ պատերազմի բռնուեց, պարսկական զորքերը Հայաստանի տարածքով անցնելիս հայերից եւս օգնութիւն ստանալով պատերազմի մտաւ օսմանցիների դէմ, սակայն յետ նահանջեց Հայաստանի տարածքով դէպի Պարսկաստան: Նա ճամբին աւերելով եւ հրդեհելով հայկական գիւղերը եւ հայաթափ անելով զօրքի հետ հայերին բռնագաղթեցրեց դէպի Իսֆահան: Արաքսը շտապ անցնելիս շատ-շատեր ջրամոյն եւ ճամբին սովից ու ծարաւից մահացան, ողջերին, շուրջ 60 հազար, թագաւորի հրամանով բնակելու տարածք յատկացուեց Իսֆահանի Զայեանդէ Ռուդ գետի ափին, Շահ Աբասը կարգադրեց Ս. Էջմիածնի նմանութեամբ եկեղեցի-վանք կառուցել:

Հայերի բնակավայր - տարածքը անուանուեց՝ Նոր Զուղա, սակայն հայերից շատեր Նոր Զուղայից քոչեցին իրենց հայրենիքում ապրած բնութեան նմանող վայրեր, որոնք յետագային անուանուեցին՝ Փերիոյ, Բուրվարու, Քեազազի, Չարմահայի եւ աւելի ուշ Քեամարայի եւ Ղարաղանի գաւառներ: Նոր Զուղայում հաստատուած հայերը կառուցեցին եւ գարգացրեցին Նոր Զուղան եկեղեցիներով, դպրոցներով եւ արհեստատեղերով: Նոր Զուղայի վանքը դարձաւ ընդհանուր գաւառների կրօնական եւ ուսումնադաստիարակչական կենտրոնը: Ի յայտ եկան նշանաւոր արհեստաւորներ տարբեր ասպարէզներում՝ ոսկրչութեան, գորգագործութեան, այգեգործութեան եւ այլ կենցաղային եւ մշակութային գործեր: Նշանաւոր վարկ ու դիրք գրաւեցին հայ վաճառականները՝ հայ խոջաները, որոնք առեւտրական կապեր հաստատեցին Հնդկաստանում, Փորտուկալիայում, Իտալիայում եւ այլուր:

Հայերը գիւղերում զբաղուեցին հողագործութեամբ, պարտիզպանութեամբ, գորգագործութեամբ եւ արհեստներով: Նոր Զուղայում եւ գաւառներում հաստատուած հայերը երկար դարերի ընթացում պահեցին եւ պաշտպանեցին իրենց հայրենիքը, լեզուն, ազգային սովորութիւնները եւ աւանդութիւնները, Հայերը իրենց օգտակար ծառայութիւններով Իրանին ու ժողովրդին համակրանքի եւ յարգանքի են արժանացել պարսիկ ժողովր-

դի մօտ եւ այդ կապը ջերմ շարունակուում է:

Անշուշտ իրանահայութիւնը նախանձախնդիր ազգային արժէքներին կառուցեց եկեղեցիներ, հիմնեց դպրոցներ, հրատարակեց թերթեր, կազմակերպեց եւ կեանքի կոչեց միութիւններ ու կազմակերպութիւններ հայկականութիւնը

Շաբ.ը էջ 19

### ԻՐԱՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՎԵՐԱՆՄԲՈՒՄ

Իրաքահայ ուսուցիչ ուսուցչուհիները գեղեցիկ գաղափարը ունեցած են. տարին անգամ մը հանդիպել վերջի շէյու իրենց անցեալի երանելի օրերը: Իրաքի մէջ Մարտի 1 ը նշուած է ուսուցիչներու տօն: ԱՄՆ-ու մէջ որոշ արգելքներու պատճառով կազմակերպիչ մարմինը որոշեց տօնել Մարտի 10ին:

Յերեկոյթը տեղի ունեցաւ Պլիս նախկին (Գարուն) գեղատեսիլ ճաշարահին մէջ: Ներկայ էին մօտաւորապէս 80 ուսուցիչ նաեւ իրենց ընկերակից հիւրերը: Այս տարի տօնախմբութիւնը բացառութիւն մը կազմած էր: Ներկաները ոչ թէ միայն Պաղտատի Ազգ. վարժարանի ուսուցիչներն էին, այլ պետական վարժարաններու մէջ պաշտօնավարած, առաւել եկեղեցիներու, միութիւններու, կիրակնօրեայ, շաբթօրեայ եւ ուրբաթօրեայ դպրոցներու մէջ:

Օրուայ տօնը նշելու համար պատրաստուած էր պատշաճ յայտագիր մը: Օրուայ հանդիսավարն էր Տիկ. Արաքսի Մէլմարեան: Ան խնդրեց ներկաներէն վարկեան մը յոտնկայս յարգել յիշատակը Ազգ.

վարժարանի տնօրէններու եւ ուսուցիչներու, որոնք յաւէտ հեռացած են մեզմէ: Տիկ. Արաքսի հակիրճ խօսքերով բացատրեց օրուայ խորհուրդը ապա ողջունեց ներկաները բարի գալուստ եւ ուրախ ժամանց մաղթեց: Հրաւիրեց Տիկ. Հայկուհի Սերոբեանը իր սրտի խօսքը ըսելու: Տիկ. Հայկուհի ոչ թէ միայն պաշտօնավարած է Պաղտատի Ազգ. վարժարանը այլ իր ասպարէզը շարունակած է Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգային վարժարանին մէջ: Տիկ. Հայկուհի ջերմօրէն ողջունեց ներկաներու եւ մանաւանդ ներկայութիւնը Փրօֆեսոր Աբրահամ Շահինեանին, որ եղած է Ազգ. վարժարանի տնօրէն, երկար տարիներ Պաղտատի համալսարաններու մէջ դասատու, հեղինակ գիտական եւ պատմական գիրքերու:

Տիկ. Հայկուհի դրուատեց անցեալի տնօրէնները, ուսուցիչները որոնք մեծ համբերութեամբ եւ սիրով դասաւանդեցին ցեխէ փոքրիկ դասարաններու մէջ առանց արդիական պիտոյքներու եւ ըսաւ

Շաբ.ը էջ 19

**On the occasion of the 101st Commemoration of the Armenian Genocide**

**ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS**

**In Collaboration with**

**Pan Armenian Organizations**

**Presents**

*Hrant Dink Oratorio*

**Dedicated to the Legacy of Hrant Dink**  
Guest of Honor

*Rakel Dink*  
Composer : Majag Toshigian

Lyricist : Bercuhi Berberyan

*Pan Armenian Choir & Orchestra*

Artistic & Choir Director: Stepan Gozumian

Music Director : Artashes Kartalian

Soloists

Soprano Soprano Tenor  
Alenoush Yeghnazar Nadima Avakian Raffi Kerbabian

**Saturday, April 16, 2016 at 7:30 PM**

**Ambassador Auditorium**  
131 S. Saint John Ave.  
Pasadena, CA 91105

**For more information & Tickets, Contact (818)342-0110**

**Abril Bookstore (818)243-4112**  
**Sardarabad Bookstore (818)500-0790**  
**Berj Bookstore (818)244-3830**  
or  
bolsahye1976@gmail.com

### ՖՐԱՆՍՈՒՅԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ

Ֆրանսուհիները միշտ ուշադրութիւն կը գրաւեն իրենց հմայքով եւ կանացիութեամբ: Անոնք իւրապատուկ են: Անոնց կեանքի քանի մը սկզբունքները, որոնց կ'արժէ հետեւիլ:

-Յատակ սահմանեցէք ձեզի համար, թէ որ հագուստը ձեզ կը դարձնէ աւելի հմայիչ: Ֆրանսուհիները յայտնի են իրենց ոճի զգացումով, քանի որ լաւ գիտեն, թէ ինչը կը վայելի իրենց, ինչը՝ ոչ:

-Յաճախ զբաղեցէք այն բանով, որ ձեզի հաճոյք կը պատճառէ: Լաւ գգալը նոյնքան կարեւոր է, որքան լաւ տեսք ունենալը: Երկարատեւ լոգանքը, շպարի տարբեր արարողակարգերը եւ մերսուսները ճոխութիւն չեն, այլ անհրաժեշտութիւն:

-Մի պատժէք ձեր մարմինը: «Չկայ ցաւ, չկայ յաղթանակ» սկզբունքը այդպէս ալ չհասաւ Ֆրանսա: Այնտեղի բնակիչները կը նախընտրեն հաճոյքի սկզբունքը: Եթէ կ'ընեն այն, ինչը քեզ հաճելի է, ուրեմն ատիկա լաւ կ'ազդէ առողջութեանը եւ յաջողութեանը վրայ:

-Ընդունէ դուն քեզ այնպիսին, ինչպէս որ ես: Նայելով իւրաքանչիւր ֆրանսական ամսագրի՝ դուք կը տեսնէք կանաչի գեղեցիկութեան անհասանելի իտէալները: Սակայն իրական կեանքի մէջ ֆրանսուհին գիտէ, որ երջանկութիւնը կախեալ չէ հագուստի չափէն, անիկա կախեալ է այն ունակութենէն, որ դուն քեզ հիանալի զգաս սեփական մաշկիդ մէջ:

-Վայելեցէք համեղ ուտելիքներ: Համեղ ուտելիքը ֆրանսական մշակութի հիմքն է: Անիկա կարելի է վայելել քիչ-քիչ, սահմանափակ քանակութեամբ: Ոչ մէկ ֆրանսուհի կ'ուտէ հաց, պանիր եւ քաղցրաւենիք ամէն օր:

-Յարգեցէք ձեր մարմինը: Շատ ուտելը ոչ մէկ լաւ բանի կը տանի: Շոքոլա՞ց կ'ուզէք, կրնաք

ուտել քիչ մը, բայց այդ պարագային այդ օրը հրաժարեցէք պանիրէն եւ գինիի երկրորդ բաժակէն:

-Չզայցեք դուք ձեզ լիարժէք: Ինքզինք յարգող ոչ մէկ ֆրանսուհի թոյլ կու տայ տունէն ելլել ճմրթուած տեսքով, մարզական հագուստով եւ կամ չսանտրուած մագով: Լաւ տեսք ունենալ կը նշանակէ յարգել ինքը քեզ եւ քեզ շրջապատող աշխարհը:

-Եղի որ այնպէս ինչպէս որ ես: Նոյնիսկ քիչ մը հետաքրքրական մատանին, ծիծաղելի երկարավիզ կօշիկը կամ վառ գոյնով շալը կ'ընդգծեն ձեր անհատականութիւնը:

-Աշխատեցէք այն բանին վրայ, որ ունիք եւ ո'չ թէ ինչ պիտի ուզէիք ունենալ: Լաւ տեսք ունենալու համար ֆրանսուհին երբեք նպատակ չի դնել նիհարնալ 3 քիլոկրամով կամ երկարել մագերը: Եթէ դուք ունիք ոճի զգացում եւ ներդաշնակ ներաշխարհ, ուստի ոչ ոք կը նկատէ այդ աւելորդ 3 քիլոկրամը:

-Եղէք բնական: Նուազագոյն շպար, համապատասխան շրթներկ եւ հաճելի բոյր, այս է այն ամէնը, որ պէտք է:

-Թոյլ մի տաք, որ տարիքը գրկէ ձեզ հաճոյքէ: Ֆրանսուհիները համոզուած են, որ տարիքը չի կրնար խանգարել կնոջ երեւնալ եւ զգալ լաւ ու մնալ հմայիչ: Այդ երկրին մէջ կան շատ յայտնիներ, որոնք տարիքի հետ կը դառնան աւելի գեղեցիկ:

-Ուրախացէք մանրուքներով: Փոքր, բայց համեղ թխուածք, նոր օծանելիք, նարդոսի բոյր... Ֆրանսուհիները կը հասկնան, որ այդպիսի մանրուքները նոյնպէս կարեւոր են:

-Վայելեցէք կեանքը: Գտէք ձեր կիրքը, ըսէք «ոչ» այն ամէնուն, որոնք կը վատնեն ձեր ժամանակը, եւ գացէք առաջ:

Կեդրոնացէք միայն այն բանին վրայ, զոր կը սիրէք եւ եղէք անկրկնելի:

### ՅՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԳԵՏՆԱԽՆՁՈՐԸ Կ'ԱԻԵԼՑՆԵ ՅՐԻՆԵՐՈՒ ՇԱՔԱՐԱԽՏԻ ՅԱՌԱՋԱՑՄԱՆ ԿՏԱՆԳԸ

Գիտնականները կը վկայեն, որ յղութեան ընթացքին մեծ չափով գետնախնձորի օգտագործումը կրնայ բարձրացնել յղինքը շաքարախտի յառաջացման վտանգը:

Յղինքը շաքարախտը յղութեան ընթացքին կը զարգանայ կրնա՞ր մէջ 2-3 տոկոսի մօտ եւ կրնայ բացասաբար ազդել փոքրիկի զարգացման վրայ: Ամէնէն յաճախ յղինքը շաքարախտի ախտանշանները կ'անհետանան ծննդաբերութենէն ետք:

Գիտնականները վերլուծած են 21.000 յղութիւններու ընթացքը, որոնց վերաբերեալ տուեալները հաւաքուած էին 1991-2001-ին: Փորձարկման մասնակիցներէն ոչ մէկը տառապած է քրոնիկ որբէէ հիւանդութենէ:

Գիտնականները վերլուծած են յղութեան ընթացքին ապագայ մայրերու սնունդի բնոյթը, առանձին ուշադրութիւն դարձնելով այն բանին,

### ՉԱՄԻՉԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՄԱՔՐԵԼ ԼԵԱՐԴԸ

Չամիչը արժէքաւոր ուտելիք է ջրաչին համակարգը հանգստացնելու եւ քունը բարեխաւար համար: Չամիչի իւրաքանչիւր հատիկ, հակառակ իր փոքրիկ չափին, կը պարունակէ արժէքաւոր, անհրաժեշտ ու մարմնի համար չափազանց առողջարար նիւթեր:

Չամիչի օգտակար յատկութիւնները կը բացատրուին թարմ խաղողի առողջարար ըլլալու փաստով, սակայն արժէքաւոր նիւթերը անոնց մէջ 10 անգամ աւելի շատ են, քան թարմ խաղողի հատիկներուն մէջ: Չամիչը կ'ամրապնդէ ջրաչին համակարգը ու կը բարեխաւարէ քունը՝ շնորհիւ վիթամին B-

նին, թէ կրնա՞ր որքան յաճախ օգտագործած են գետնախնձոր՝ փիւրէի, տապկուածի, խորովածի, եփածի եւ չիփսի տեսքով: Անոնք հաշուի առած էին նաեւ այնպիսի գործօններ, ինչպէս ֆիզիքական աշխոյժութեան մակարդակը, տարիքը, ճարպակալուածը:

Պարզուած է, որ այն կրնա՞ր մօտ, որոնք շաքար չեն ընդ քան հինգ չափ գետնախնձոր կերած էին (մէկ չափաբաժինը համապատասխանած էր 100 կրամի), յղինքը շաքարախտը զարգացած էր 50 տոկոսով աւելի յաճախ, քան անոնց մօտ, որոնք քիչ կերած էին գետնախնձոր:

Գիտնականները կը կարծեն, որ այդ բարդութեան ի յայտ գալուն պատճառը գետնախնձորին մէջ պարունակուող օսլան է, որ արեան մէջ կտրուկ կերպով կը բարձրացնէ շաքարի մակարդակը:

Ի խումբերու մեծ քանակին: Անիկա կարելի է օգտագործել իբրեւ հանգստացնող միջոց, որ կը հանէ մարմնի լարուածութիւնն ու յոգնածութիւնը:

Լեարդը մաքրելը չամիչի միջոցով ամենաարդիւնաւէտ միջոցներէն մէկն է մարմնի բուժման ու քրոնիկ հիւանդութիւններէն ազատելու համար, չէ՞ որ նոյնինքն մարմնի աւելորդ նիւթերով ծանրաբեռնուածութիւնը կը խանգարէ անոր ինքնապերականգնման աշխատանքը, ինչպէս նաեւ զգալիօրէն կը նուազեցնէ դեղորայքի ու աւանդական բժշկութեան բաղադրատոմսերու ազդեցութիւնը:

### ԶԳՈՒՇԱՅԷ ԿՐԻԲԵՆ.

### 10 ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ ԶՅԻՒԱՆԴԱՆԱԼՈՒ ՅԱՄԱՐ

Կրիբով վարակուիլ հնարաւոր է իւրաքանչիւր եղանակի: Սակայն մարդոց բաւական մեծ հատուած կը հիւանդանայ ձմրան ամիսներուն: Կան քանի մը միջոցներ, որոնք ձեռնարկելու պարագային վարակուելու հաւանականութիւնը կարելի է զգալիօրէն նուազեցնել:

1. Աշխատեցէք խուսափիլ ամբոխէ: Շատեր կ'օգտուին հանրակառքերէն: Ատիկա կը նշանակէ, որ մենք այս կամ այն կերպ պարբերաբար կը յայտնուինք մեծ թիւով մարդոց մէջ, որ բնականաբար կ'աւելցնէ կրիբով վարակուելու հաւանականութիւնը:

2. Պարբերաբար լուացէք ձեռքերը: Ձեռքերը յաճախակի լուալով կը խուսափիք ո'չ միայն կրիբէն, այլեւ՝ այլ վարակներէ:

3. Մի մսիք: Յատկապէս կարեւոր է տաք պահել ոտքերն ու վիզը: Անձրեւային եղանակին գերադասելի է պատշաճ կօշիկներ կրել:

4. Հիւանդներու հետ շփման մէջ մի մտնէք: Տան մէջ հիւանդի առկայութեան պարագային աշխատեցէք կրճատել անոր հետ շփումը, մի օգտուիք նոյն սպասքէն:

5. Յաճախ մաքրեցէք բնակարանը: Եթէ տան մէջ հիւանդ մարդ կայ՝ պէտք է տուել մաքրել նուազագոյնը 3 անգամ: Յատկապէս ու կահոյքը մաքրեցէք թաց լաթով:

6. Ճիշդ սնուցեցէք: Կարեւոր է գիտնալ, որ կրիբով վարակուիլ

կարելի է նոյնիսկ հիւանդի հետ չշփուելու պարագային: Առաջին հերթին՝ վարակուելու կրնայ յանգեցնել ցած դիմադրողականութիւնը: Պատճառ կրնայ դառնալ սխալ սնունդը:

Ցանկալի է օգտագործել թարմ բանջարեղէն եւ միրգեր: Բացի այդ, օրուան ընթացքին պէտք է 8 ժամ քնանալ:

7. Ալքոլի օգտագործման նուազեցում: Հաւանաբար շատեր կը մտածեն, որ ալքոլը լաւ է կրիբի եւ այլ հիւանդութիւններու պարագային: Սակայն, իրականութեան մէջ ասիկա սխալ է եւ ոչ մէկ հիմք ունի: Աւելին, ալքոլը բացասաբար կ'ազդէ դիմադրողականութեան վրայ: Այդ պատճառով ալ գերադասելի է զայն ընդհանրապէս չօգտագործել:

8. Մարզանքով զբաղեցէք: Առաւօտը սկսեցէք մարզանքով: Ատիկա կրնայ օգնել կանխարգիլել շատ հիւանդութիւններ, ներառեալ՝ կրիբը: Մարզանքի վրայ պիտի ծախսէք 20 վայրկեան, սակայն պիտի ունենաք լաւ ինքնազգացողութիւն եւ առողջութիւն:

9. Չափէն շատ մի աշխատիք: Այս պարագային մարմինը կրնայ այնքան տկարանալ, որ չկրնայ դիմադրել հիւանդութիւններուն:

10. Շատ հեղուկներ խմեցէք: Ձուրը կենաք է: Որպէսզի դիմադրողականութիւնը բնական վիճակի մէջ ըլլայ, օրուան ընթացքին նուազագոյնը 8 գաւաթ ջուր խմեցէք:

### ԻՆՉՊԵՍՏ ԼՐԱՑՆԵԼ ՎԻԹԱՄԻՆ Ծ-Ի ՊԱԿԱՍԸ ՉՄՐԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Չմրան ընթացքին մեր մարմինը կը տառապի արեւային «սննդակարգէ» եւ մենք կ'ունենանք վիթամին Ծ-ի պակաս, զոր տարուան միւս եղանակներուն կը ստանանք արեւէն:

Վիթամին Ծ-ի շնորհիւ քալիսիումը, ֆոսֆորը, վիթամին Ա-ը, մակնեցիտը եւ այլ օգտակար նիւթերը, որոնք կը պարունակուին սնունդի մէջ, կը ներծծուին մարմնի մէջ բարակ աղիքի միջոցով: Այդ պատճառով այս վիթամինին պակասը կը խանգարէ նաեւ օգտակար տարրերու ներթափանցումը մեր մարմնին մէջ:

Վիթամին Ծ-ն նաեւ կը կարգաւորէ նիւթափոխանակման գործընթացները, կը խթանէ որոշ հորմոններու աշխատանքը եւ շատ կարեւոր է ոսկորներու աճի, սրտի աշխատանքի, արեան մակարդակի իրութեան համար: Վիթամին Ծ-ն նաեւ կը կարգաւորէ ջրաչին համակարգի աշխատանքը:

Ինչպէ՞ս լրացնել այս կարեւոր վիթամինին պակասը. Պարզ է, որ վիթամին Ծ-ի հիմնական աղբիւրը արեւն է եւ անոր պակասի պարագային պէտք է գտնել այլ լրնարանք: Չմրան ընթացքին, երբ

արեւոտ է, աշխատեցէք երկար զբօսնել: Վիթամին Ծ-ի յառաջացման կը նպաստեն նաեւ օդային եւ ջրային լոգանքները եւ մերսուսը:

Շատ կարեւոր է նաեւ ձմրան ընթացքին օգտագործել այս վիթամինի պարունակութեամբ սնունդ՝ ինչպէս ձուկ եւ ծովային ուտելիքներ: Իւրոտ ձուկը վիթամին Ծ-ի հիանալի աղբիւր է:

Կաթնեղէնը. Մէկ գաւաթ կաթը կը լրացնէ վիթամին Ծ-ի օրական պահանջը: Նաեւ կարելի է օգտագործել պինդ տեսակի պանիր, կարագ:

Հակիթը. Տապկուած հակիթը ոչ միայն ամենահասարակ եւ յայտնի նախաճաշն է, այլ նաեւ ամենահամեղն ու օգտակարը: Առաւօտեան տապկուած հակիթը կ'ապահովէ օրական պահանջի 10%-ը, որ կայ անոր գեղնուցին մէջ:

Սունկը. Վիթամին Ծ-ն սունկի մէջ կ'արտադրուի արեւու ճառագայթներուն շնորհիւ: Անոր քանակը չի փոխուիլ սունկի պատրաստման եղանակէն:

Բուսական սնունդ. Յատկապէս օգտակար են ազատքեղը, եղինջը, աւուրցը, սոյան:



### ՎԱՐՇԱՄ ԲՈՐԱՆԵԱՆԸ ԵՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ



Վարշամ Բորանեանը հուշակուեց յունահունական ըմբշամարտի Եւրոպայի ախոյեան: 71 կգ քաշային կարգի եզրափակիչում Հայաստանի ներկայացուցիչը 3:0 հաշուով պարտութեան մատնեց սերբ Ալէքսանդար Մաքսիմովիչին:

Յիշեցնենք, որ Վարշամ Բորանեանն առաջին գոտեմարտում 8:0 հաշուով յաղթել էր ռուսինացի Տոմի Կլաուդիո Հինովեանուին: 1/8 եզրափակիչում Բորանեանը նոյն հաշուով շանս չտուեց պորտուգալացի Հուգո Միգել Դա Սիլվա Պաստին: Քառորդ եզրափակիչում հայ ըմբշիչի 8:2 հաշուով յաղթեց պուլկարացի Սվիլէն Պլամենով Կոստադինովին: Կիսաեզրափակիչում Բորանեանը դուրս թողեց հունգարացի Բալինտ Կորպասին:

Եւրոպայի առաջնութիւնում պրոնոզէ մետալի համար գոտեմարտում Կարապետ Չալեանը մրցեց ատրպէյճանցի էլվին Մուրաալիեւի հետ: 75 կգ քաշային Չալեանը յաղթեց 4:1 հաշուով եւ գրաւեց երրորդ տեղը:

Չալեանը սփոփիչ գոտեմարտում 8:0 հաշուով յաղթել էր Թուրքիայի ներկայացուցիչ էմրա Սուլէյման Կուսին:

Կարապետ Չալեանը կիսաեզրափակիչի ուղեգրի համար գոտեմարտում էր վրացի Զուրաբի Դատունաշվիլիի հետ եւ պարտուեւ 0:8 հաշուով: Դատունաշվիլին դուրս է եկել եզրափակիչի, ինչի շնորհիւ հայ ըմբշիչը շարունակում է պայքարը:

Որակաւորման փուլում Չալեանը 7:6 հաշուով յաղթել էր գերմանացի Եան Ռոսերին, 1/8 եզրափակիչում 10:5 հաշուով ուժեղ էր պուլկարացի Իլիան Տոգորով Գէորգիեւից:

Հայաստանը նուաճել էր 2 արծաթէ մետալ: 59 կգ քաշային Ռոման Ամոյեանը եւ 98 կգ քաշային Արթուր Ալեքսանեանը հասել էին եզրափակիչ, որտեղ պարտուեւ էին:

Եւրոպայի եռակի ու աշխարհի կրկնակի ախոյեան Արթուր Ալեքսանեանին ոսկէ մետալ նուաճել թոյլ էր տուել ռուս Նիկիտա Մելնիկովը, իսկ 32-ամեայ Ամոյեանին ժամանակից շուտ 8:0 հաշուով յաղթել էր ռուսաստանցի Մինգիեան Սեմյոնովը:

Հայաստանի ներկայացուցիչներին պայքարի մէջ էին մտել նաեւ Միհրան Յարութիւնեանը (66 կգ) եւ Էդգար Խաչատրեանը (130 կգ), որոնք մետալ չէին նուաճել: Առանց մեդալի մնացին նաեւ Ռաֆայէլ Մանուկեանը (80 կգ) եւ Մաքսիմ Մանուկեանը (85 կգ):

### ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԻ ՎՍՏԱՅ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Մոսկուայում ընթացող աշխարհի ախոյեանի չալակնորդների մրցաշարում հայկական շախմատի առաջատար Լեւոն Արոնեանը երրորդ տուրում սեւերով մրցեց պուլկարացի Վեսելին Տոպալովի հետ եւ վստահ յաղթանակ տարաւ:



Սա Լեւոն Արոնեանի առաջին յաղթանակն էր այս մրցաշարում: Առաջին երկու տուրերում հայ գրոսմայստերը խաղացել էր ոչ ոքի եւ այժմ ունի 2 միաւոր: Արոնեանը հաւասարուեց առաջատարներ Վիշվանաթան Անանդին եւ ռուսաստանցի Սերգէյ Կարիակինին, որոնք երեք տուրից յետոյ եւս վաստակել են 2-ական միաւոր:

Երրորդ տուրում Անանդը սպիտակներով ոչ ոքի խաղաց ամերիկացի Ֆաբրիանո Կարուանայի հետ, իսկ Կարեակինը սեւերով միաւորը կիսեց հոլանդացի Անիշ Գիրիի հետ:

Առաջատարներին հաւասարուելու հնարաւորութիւն ունի երկու տուրից յետոյ մէկ միաւոր վաստակած ռուսաստանցի Պիտր Սվիդլերը, որի պարտիան ամերիկացի Հիկարու Նակամուրայի հետ շարունակում է:

### «ԱՐԱՐԱՏ» - «ՓԻՆԻԿ»՝ 1:2

Ֆուտպոլի Հայաստանի առաջնութեան 17-րդ տուրում «Արարատն» ու «Փինիկը» մրցեցին Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» ստադիոնում: Սարգիս Յովսէփեանի գլխաւորած թիմն առաւելութեան հասաւ 2:1 հաշուով:



«Փինիկը» 33 միաւորով երկրորդ տեղում է եւ 2 միաւոր է գիշում առաջատար «Ալաշկերտին»: Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչ Վարուժան Սուքիասեանի ղեկավարութեամբ «Արարատը» 26 միաւորով չորրորդն է:

### ԴՈՐՏՄՈՒՆԴԻ «ԲՈՐՈՒՄԻԱՆ» ՅԱՂԹԵՑ ՌՈՅՍԻ ԵՒ ԿԱԳԱՎԱՅԻ ԿՈԼԵՐԻ ՇՆՈՐՀԻ

Գերմանիայի առաջնութեան 26-րդ տուրում Դորտմունդի «Բորուսիան» ընդունեց «Մայնցին»: Թոմաս Տուխելի գլխաւորած թիմը յաղթանակ տարաւ Մարկո Ռոյսի եւ Սինճի Կագավայի կոլերի շնորհիւ՝ 2:0:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը դորտմունդեան թիմի մեկնարկային կազմում էր եւ փոխարինուեց 85-րդ րոպէին:

«Բորուսիան» 61 միաւորով երկրորդ տեղում է եւ շարունակում է հինգ միաւոր յետ մնալ Միլնիսենի «Բաւարիայից»:

### ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ՌԷԱԼ ՍՈԼՈ ԼԵՅՔԻ» ԿԱՄԱՅԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ

MLS-ի կանոնաւոր առաջնութեան երկրորդ տուրում ամերիկեան «Ռէալ Սոլթ Լէյքը» սեփական խաղադաշտում 2:1 հաշուով կամային յաղթանակ տարաւ «Սիեթլի» նկատմամբ: Առաջին խաղակէսն աւարտուեց 1:1 հաշուով, իսկ դաշտի տէրերը յաղթական կողմ խփեցին 86-րդ րոպէին:



«Ռէալ Սոլթ Լէյքը» յարձակուող Եուրա Մովսիսեանը մեկնարկային կազմում էր եւ փոխարինուեց աւելացուած ժամանակում:

Առաջին տուրում «Ռէալ Սոլթ Լէյքը» ոչ ոքի էր խաղացել «Օռլանդո Սիթիի» հետ, իսկ Եուրա Մովսիսեանը վաստակել էր 11 մեթրանոց հարուած:

Յիշեցնենք, որ Մովսիսեանը չի հրաւիրուել Հայաստանի հաւաքական, որը Մարտի 25-ին Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» ստադիոնում ընկերական հանդիպում է անցկացնելու Բելառուսի թիմի հետ:

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** **Մարտ 21-Ապրիլ 19**  
 Ապագայի նկատմամբ ունեցած վստահութիւնը քեզ շատ կը զօրացնէ ամէն տեսակի դժուարութեանց եւ նեղութիւններու մէջ: Գործիդ վերաբերեալ շատ լաւ գաղափարներ ունիս, բաժնեկցիր զանոնք որպէսզի հաւաքական ուժով յաջողութիւն գտնես:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,19,21,25,30

**ՑՈՒԼ** **Ապրիլ 20-Մայիս 20**  
 Զ'ակնկալած անձի մը բարերար պիտի ըլլաս եւ անոր ուրախութիւն պիտի պատճառես: Խնդրանքներդ տրամաբանական թող ըլլան եւ կարողութեանդ սահմաններուդ մէջ: Խոնարհութեամբ եւ ժպտադէմ դիմաւորէ հիւրերդ:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,16,24,28,32

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** **Մայիս 21-Յունիս 20**  
 Ամէն բանի շատ դիւրութեամբ կը հաւատաս եւ ըստ այնմ արդիւնքներու կը հանգիս, շատ աւելի իմաստուն կրնաս ըլլալ: Երկար ճամբորդութեան մը մասին կը մտածես, սակայն յոյսերդ ի թերեւ պիտի ելլեն: Պատասխանատուութիւններուդ տէրը եղիր:  
 Բախտաւոր թիւերդ են: 4,8,18,27,29

**ԽԵՑՁԵՏԻՆ** **Յունիս 21-Յուլիս 22**  
 Գործիդ մէջ անփորձ ըլլալուդ՝ կը ծանրաբեռնուիս փոքր ծրագիրներով: Ընտանեկան անհասկացողութեան մը ընթացքին, եղելութիւնը ամբողջութեամբ չլսած, կը դատես եւ շատ ատեն կը սխալիս: Դուն քեզ վստահ մէջ մի դներ ուրիշներու համար:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,11,18,22,32

**ԱՌԻԲԾ** **Յուլիս 23-Օգոստոս 22**  
 Յաճախ օրէնքները կը խախտես եւ դժուարութեան դիմաց կը գտնուիս: Գոհունակութիւն յայտնելու մի մոռնար երբ բարիքներու դիմաց գտնուիս: Ծրագիրներդ իրագործելու համար հաստատ եւ հմուտ անձի մը պէտք ունիս:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,16,20,28,35

**ԿՈՅՍ** **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**  
 Ամէն տեսակի ուրախութիւններէն դուն քեզ կը զրկես: Ինքզինքիդ լաւ հոգ տանելու եւ որպէսզի առողջ մնաս: Շուարած վայրկեաններուդ եւ ճարահատ եղած ժամերուդ մէջ, սխալ վայրերու մէջ կը փնտռես լուծումը: Իմաստ ունեցող բաներով զբաղէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,17,19,25,30

**ԿՇԻՌՔ** **Սեպտեմբեր 23-Յոկտեմբեր 22**  
 Անհաճելի կացութեան մը առջեւ պիտի գտնես դուն քեզ եւ պիտի բարկանաս: Դրական դիրք բռնէ եւ փորձէ համաձայնիլ ենթակային հետ: Օղանաւային ճամբորդութիւն մը շատ հաւանական է գալիք ամիսներուն, պատրաստուէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,11,24,31,35

**ԿԱՐԻՃ** **Յոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**  
 Ընտանիքիդ ապահովութեան համար յատուկ քայլեր կ'առնես եւ խստութիւն կը բանեցնես տանդ յարկէն ներս: Դժգոհութիւններդ բացայայտօրէն մի արտայայտեր օտարներու ներկայութեան: Դրամիդ արժէքը լաւ գիտցիր եւ խնայէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 7,15,25,26,33

**ԱՂԵՂՆԱԲՈՐ** **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**  
 Ուրիշներու վերաբերմունքները յաճախ կը հակակշռես, փոխարէնը հակակշռէ դուն քեզ եւ զուսպ եղիր: Գործիդ վերաբեռեալ շատ լուրջ ես եւ մեծ գոհունակութիւն կը ստանաս, երբ կ'աշխատիս: Վայելքի համար եւս ժամանակ տրամադրէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 4,9,18,20,30

**ԱՅԾԵՂՋԻԻՐ** **Դեկտեմբեր 22-Յունուար 19**  
 Ուրիշին ունեցածները միշտ աւելի լաւ կը նկատես, գոհացիր քու ունեցածներովդ: Շատ դիւրաւ կրնաս հրապուրել շուրջդ գտնուող ամբոխը եւ զանոնք օգտագործել քու շահերուդ համար: Դեռու տեղէ մը այցելու մը պիտի ընդունիս եւ տունդ պահես զինք:  
 Բախտաւոր թիւերդ են: 10,11,25,29,34

**ԾՈՎԱԼՈՅՇ** **Յունուար 20-Փետրուար 18**  
 Ուրիշներուն խօսքերէն տարուելով՝ սխալ որոշումներ կ'առնես եւ յաճախ փորձանքի կը մատնուիս: Դուն քեզ արժեւորելու համար պէտք է ինքնավստահութիւնդ եւ կամքդ զօրացնես: Շաբաթավերջին կողակիցիդ հետ հաճելի պտոյտ մը պիտի սփոփէ քեզ:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,12,25,30,31

**ԶՈՒԿ** **Փետրուար 19-Մարտ 20**  
 Շատ գիտակից անձ մըն ես եւ միշտ ուրիշներու կամքին կը հետեւիս: Վէճեր կանխելու համար, յաճախ իրաւունքդ կը կորսնցնես: Գործի մեծ յաջողութիւն մը ինքնավստահութիւնդ պիտի զօրացնէ եւ դուն քեզի նկատմամբ ունեցած տպաւորութիւնդ պիտի փոխէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 7,12,28,34,35

### ՄՈՍԿՈՒԱՅԻ ԱՆՄՊԱՍԵԼԻ ԳԱՂՏՆԱԶԵՐԾՈՒՄԸ

#### Շարունակուած էջ 6-էն

պէջճանը ժամանակ առ ժամանակ սրում է լարուածութիւնը սահմաններում, ինչի արդիւնքում հայ գինձառաջողներ են գոհուում:  
 Այսօր Մոսկուան այլ, աւելի կարեւոր խնդիրներ ունի քան Ատրպէյճանին գինտեխնիկայի վաճառքի մասին մեզ անհանգստացնող համաձայնագրերը, քան շփման գծում շարունակական դիվերսիաները Ատրպէյճանի կողմից եւ Հայաստանի դէմ Պաքուի դիւանագիտական արշաւները՝ ողողուած կեղծիքով եւ հայտնեացութեան քարոզով:  
 Ու բացի այդ, հետաքրքրական է նաեւ մէկ այլ հարց՝ ինչու՞

են ուսաստանցի բարձրաստիճան պաշտօնեաները յանկարծ որոշել, որ հենց Հայաստանում պէտք է բարձրացնեն Սիրայի խնդիրը ու «յատուկ մտահոգութիւն» յայտնեն, Թուրքիայի կողմից Սիրիայի տարածքի ուժեղացումները եւ Թուրքիայի այլ գործողութիւնները վերաբերեալ:  
 Ինչ է, Ատրպէյճանի գործողութիւնները տարածաշրջանում պայթիւնավտանգ իրավիճակ չե՞ն ստեղծում: Իսկ գուցէ Ռուսաստանը Թուրքիայի ուղղութեամբ այլ «ծրագրեր» ունի՞ Հայաստանի «աջակցութեան» մասով եւ ինչ-որ բան է նախապատրաստում...  
**«ՀԱՅԵԼԻ»**

### ՅԱԵՐԺՕՐԷՆ ԶԱՐԵՆՑԱՏՐՈՓ

#### Շարունակուած էջ 7-էն

կը բնութագրէ հանճարեղ գրողը. «Մեծով ու փոքրով, մեծաւորով ու փոքրաւորով, հասուով ու միամիտով, շնորհակալութեան, երախտագիտութեան անհուն զգացումով՝ այսօր ազգովին ծնրադիր երկրպագութեան ենք կենում չիշատակի առջեւ մեր այն մեծի, մարդկութեան ամենակատարեալ արարումներից մեզ բաժին ընկած այն եզակիի, ում վիթխարի ու շողշողուն արեւը բարձրացել է մեզնից հարիւր տարի առաջ, եւ մայրամուտն իջել է մեզնից վաթսուս տարի առաջ»:  
 Կարգ մը չարամիտ մտաւորականներ, չետին նպատակ ունենալով օրուան վարչակարգը, ուշացած կերպով վատաբանելու համար անցեալը, Չարենցի ծնունդը փառաւորելէ աւելի կ'ուռճացնեն անոր

նահատակութիւնը եւ կ'եղերգեն՝ թէ ան շիրիմ մ'անգամ չունեցաւ չիշուելու համար, իտե՛նկ վառելու համար: Բայց Չարենց ի՞նչ պէտք ունի շիրիմի՞ չիշուելու համար, երբ ողջ Հայաստանը կը բաբախէ Չարենցեան խինդ ու խօսքով, պիւրքի մէջ կ'ասմունքներ յարատեւօրէն՝ ներշնչուելով անոր անսպառ ժառանգէն, սերունդներ դաս ու պատգամ կ'առնեն անկէ մշտապէս:  
 Այնուամենայնիւ, երախտապարտ ենք այն հանճարեղ փոքրահասակ տիտանին՝ որուն բանով ու բառով կ'ընթանայ հայ կեանքը: Յաւերժօրէն Չարենցատրոփ է հայութիւնը՝ իր բոլոր շերտերով, սերունդներով եւ ապագայատեսիլ պատգամով:  
 119 տարիներ առաջ նորածին Եղիշ Սողոմոնեանին առաջին ճիշը Նախախնամութեան լիաձիր պարգեւը չէ՞ր արդեօք:

### Ծիծեռնակաբերդը՝ Կոչ Յիշատակի

#### Շարունակուած էջ 13-էն

պատմում է նա՝ ինքը եւ տալիս այն քաղաքների անունները, որտեղ հայեր են ապրել՝ Վան, Փաթնոս, Աղլի: Հիմա այնտեղ հատուկենտ հայեր են մնացել կամ առհասարակ չեն մնացել:  
 Ես Երեւան եմ գալիս ապրիլի 24-ին՝ ցեղասպանութեան 100-ամեակին: Քաղաքը պատառներով մէջ կորած է:  
 «Յիշում եմ եւ պահանջում»:  
 Բայց ի՞նչ եմ պահանջում:  
 Գիւմրիի եպիսկոպոս Միքայէլ Աջլպանեան. «Հայաստանում Թուրքերին չեն ատում: Մենք հասարակ Թուրքերի դէմ ոչինչ չունենք: Սակայն Թուրքիան պէտք է ամէն բան անի, որպէսզի վէրքերը բուժուեն»:  
 Բայց ամենազարմանալի պատմութիւնը, որը ես այստեղ լսեցի, ինձ մի երիտասարդ հայ պատմեց:  
 «Ես շատ փոքր էի, երեւի 1 տարեկան: Հիւանդանոցում մահանում էի: Ասում են՝ փոքաբոբ էր մօտս: Բժիշկները ոչինչ չէին կարող անել: Մայրական բաժանմունքում մի Թուրք կին (հաւանաբար աղբբեջանուհի, ծնթ. խմբ.) տեսել էր, որ մայրս լացում է: Նա

խնդրել էր ինձ պահել, բռնել էր ոտքերիցս եւ թեքել դէպի իրեն: Ասես թէ ինքն էր ինձ ծննդաբերում նորից: Նա 7 անգամ այդպէս արեց եւ աղօթք կարդաց»:  
 Ե՛ւ:  
 «Լաւացա, - ասում է նա: - Այդ Թուրք կինը կեանքս փրկեց»:  
 Այդ պատմութիւնը գինուոր Արա Քեմալեանն ինձ պատմել է սահմանամերձ խրամատներում՝ փոշոտ դեղին երկնքի տակ: Հայերը մինչեւ հիմա աղբբեջանցիներին թշնամու անունով են կոչում՝ Թուրք: Այդպէս է Քեմալեանն անուանում մանկաբարձ աղբբեջանուհուն:  
 «Ես միշտ տանս խոհանոցում կրակ եմ վառ պահում», - ասում է Վահանդուխտ Վարդանեանը: Նրա տունը հենց սահմանին է եւ նայում է ուղիղ Անիին: «Այդպէս ես Թուրքերին ուզում եմ ցոյց տալ, որ մենք դեռ ողջ ենք»:  
 Հայաստանի սահմանամերձ Բագարան գիւղի բնակիչները Թուրքիայի հետ սահմանին հսկայական խաչ են դրել, որը երեկոյեան էլեկտրական լոյսով է վառվում: Այն նայում է Թուրքական կողմին, իսկ գիւղացիները երգեր են երգում կեանքի եւ չիշատակի մասին:



«ԳԱԼՈՒՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ» ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Շարունակում է 13-էն

• Պահանջուած սակի նշումը:
• Յանձնարարող երեք տեղեկաբերներու կապի տուեալները (գործընկերներ կամ վերահսկիչներ):
• Մէկ էջնոց նամակ մը, որ կը բացատրէ ենթակային պատրաս-

տութիւնը եւ յիշեալ բնագրի թարգմանութեան հանդէպ անոր շահագրգռութիւնը:
Ընտրուած թարգմանիչները պիտի տեղեկացուին մինչեւ Մայիս 2016ի կէսերը: Զընտրուած անձերը մաս պիտի կազմեն պահեստի ցանկի մը՝ ապագայ յղումի համար:

ՔԵԱՄԱՐԱ ՂԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄ

Շարունակում է 15-էն

պահելու համար: Սակայն մեր ժամանակներում հայկական գաւառները հայաթափ եղան երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ ընձեռնուած հայրենադարձութեան շնորհիւ, մէկ մասը մեկնեց հայրենիք, իսկ խոշոր մասը մնացին հաստատուելով Թեհրանում, քանի որ սովետը կանգ տուեց գաղթը: Վերջին 30 տարիների ընթացքում ցաւօք իրանի հաշտութեան թիւը շոշափելիորէն պակսել եւ դեռ շարունակում է գաղթը դէպի արեւմտեան երկրներ:

նախմբի առաջին քայլն էր, որ արժանացաւ գովասանքների, արդէն իսկ ձեռնարկուել է այդ գաւառի պատմութիւնը ներկայացնել ստուար մի գրքով, որի շնորհանդէսը պիտի մեծ շուքով կատարուի նպատակ ունենալով վառ պահելու գաւառի յիշատակները եւ սատար կանգնել հայապահպանման աշխատանքներին:

Յանձնախումբը նաեւ իւրաքանչիւր Հայաստանի հիմնադրամի թեյեթոնին իր նիւթական օժանդակութիւնն է բերում իր կարողութեան համապատասխան օգտակար լինելով հայրենիքին եւ Արցախին:

Սրտանց յաջողութիւն ենք մտղթում Քեամարա Այրենակցական յանձնախումբի ազգանուէր ու հայրենանուէր ծառայութիւններին:

\*\*\*\*\*

Լուս Անգելէսի Գեամարա հայրենակցական յանձնախումբը՝ Նստած շարքի ձախից-աջ՝ Գեղամ Մահրապեան, Ջիբրայէլ Ղազարեան (փոխ Բարտուղար), Համօ Սաֆարեան, Արրահամ Ղաղիմեան, Միհաս Մամիրեան, Խաչիկ Մամիրեան, Արամ Մամիրեան:

Կանգնած շարքի ձախից-աջ՝ Ռ. Կորիւն ( լրագրող ), Գուրգէն Նազարեան, Նորայր Միրզախանեան, Մահէն Հախվերդեան (հաշուապահ), Մուարշ Ղազարեան (նախագահ), Սեմիկ Մահվերդեան, Վահան Ղարիբեան (Բարտուղար եւ զանձապահ), Սայեադ Մանուկեան (փոխ նախագահ), Բացակայ անդամ Սեդա Մահվերդեան:

ԻՐԱԲԱՅԱՅ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՎԵՐԱՆՍՐՈՒՄ

Շարունակում է 15-էն

ուսուցչութիւնը սուրբ ասպարէզ է: Ներկաները ոչունեցին գնահատական խօսքերով եւ ծափերով: Անիր խօսքը շարունակելով ըսաւ. «մենք մեր լաւագոյնը պիտի ընենք այս հաւաքոյթները շարունակելու, որպէսզի օրինակ դառնայ մեր նոր սերունդին:

Իր խօսքի վերջաւորութեան հրաւիրեց Տիկ. Սօնա Սերոբեանը որպէսզի ստանայ կազմակերպիչ մարմինի կողմէ ծաղկեփունջը առի գնահատանք իր թափած անխոնջ ջանքերուն օրուայ տօնակատարութիւնը յաջողցնելու համար: Տիկ. Սօնա տարիներ պաշտօնավարած է Ազգ. վարժարանի մանկապարտէզը: Ան իր սրտի խօսքը յայտնելու համար արտասանեց Ալազեանի բանաստեղծութիւնէն՝ «Հայ Ուսուցիչ» շատ սահուն եւ գեղեցիկ առողանութեամբ եւ արժանացաւ ներկաներուն ծափողոյններուն:

Հանդիսավարը հրաւիրեց Տիկ. Սեդա Թշապուրեանը որպէսզի կարդայ ուսուցչիչներուն անունները իրար ծանօթացնելու համար: Տիկ. Սեդան տարիներ պաշտօնավարած է Ազգ. եւ պետական վարժարանները: Ան իր կարգին արտասանեց Մարօ Մարգարեանի «Հայոց Ուսուցիչ» եւ Արամայիս Սահակեանի «Սիրելի Ուսուցիչ» բանաստեղծութիւններէն հատուած մը: Տիկ. Սեդա հրաւիրեց վաստակաշատ ուսուցչուհի Տիկ. Շաքէ Ազիզեանը իր խօսքը ըսելու: Ան ազդուած տօնակատարութեան մթնոլորտէն ըսաւ. «Մենք Մաշտոցի գաւակներ, մենք Մաշտոցի զինուորներ պիտի կերտենք եւ պաշտպանենք մեր մայրենի լեզուն որ մեզի աւանդ տրուած է» ան արժանացաւ ներկաներու գնահատանքին եւ ծափերուն:

Փոքր ընդմիջումէ ետք ներկաները ունկնդրեցին ձայնագրուած «Սիրելի Ուսուցիչ» երգը. հանդիսավար հրաւիրեց պատուելի տնօրէնը որ իր պատուէրը տայ Պր. տնօրէնը նախ շնորհաւորեց ուսուցչական տօնը եւ յորդորեց որ այսպիսի մշակութային հաւատոյթները միշտ շարունակուին: Ներկայ ստիակը Տիկ. Շուշան Քասապեան իր հմայիչ եւ գուլալ ձայնով գրաւեց ներկաներուն ուշադրութիւնը երգեց «Եարը մարդու եարա կ'ուտայ»:

Տիկ. Արաքսի հրաւիրեց Պր. Համբարձում Աղպաշեանը որպէսզի իր գրած գիրքի մասին բացատրութիւն տայ: Պր. Աղպաշեան ըսաւ «ես ասպարէզով երկրաչափ եմ բայց ցեղասպանութեան 100 ամեակին սկսայ հետաքրքրելի թուրք մտաւորականներու կարծիքը ինչ է հանդէպ Հայոց ցեղասպանութեան եւ մինչեւ այսօր ես հաւաքեցի 104 անուն եւ ամէն շաբաթ լոյս կը տեսնէ Նոր Օր եւ Մասիս շաբաթաթերթերու մէջ: Հանդիսավարը շնորհակալութիւն յայտնեց լուսաբանութեան համար:

Սրահի մթնոլորտը ալ աւելի խանդավառուեցաւ երբ սկուտեղով փոքրիկ կարկանդակներ վրան գետեղուած մոմեր ճաշարահ բերուեցաւ նշելու համար տարեդարձը Մարտ ամսուայ ծնածներուն: Բոլորը միասին երգեցին «Տարեդարձ է այսօր»: Իսկ վիճակահանութեան գեղեցիկ նուէրներուն արժանացան 15 բախտաւոր անձեր: Տօնախմբութիւնը իր աւարտին հասաւ կէսօրուայ ժամը Յին: Ներկաները բարձր տրամադրութեամբ եւ աւելի երիտասարդացած հրաժեշտ տուին եւ խնդրեցին միշտ կրկնուի այսպիսի ձեռնարները: Վարձքերնիդ կատար կազմակերպիչները: Ներկայ մը

Advertisement for 'CHITISHI' event. Includes text: 'REMEMBER 1915 & RISE!!!', 'ARA GEVORGYAN GUEST OF HONOR', and a list of vocalists. Ticket information at the bottom.

Subscription form for 'ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ' magazine. Includes pricing for USA, Canada, and Overseas, and fields for Name, Address, City, State, Zip Code, Country, and Email.

Advertisement for 'ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՏԱԿՆԵՐ' (Rent books). Includes address: 1060 North Allen Ave, Pasadena, CA 91104, and phone number: (626) 398-0506.

